# Ազգ
Azg

9 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2010 ՇԱԲԱԹ 184 (4564)

ISSN: 1829-1651


## Փակ նիստ՝ բանակի խնդիրների վերաբերյալ

**ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի երեկվա փակ նիստում քննարկվելիք միակ թեման վերջին շրջանում բանակում տեղի ունեցող աղմկարահարույց սպանություններն ու ինքնասպանություններն էին: Ավելի քան մեկ ժամ տեւած քննարկման ընթացքում հաղորդումներ են ներկայացրել պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության, ռազմական դատախազության եւ քննչական ծառայության ներկայացուցիչները: ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրայր Կարապետյանը «Ազգ»-ին փոխանցեց, որ ուժային կառույցների ներկայացուցիչները ներկայացրել են ոլորտում առկա իրավիճակն ու խնդիրները: Այնուհետեւ պատգամավորները ներկայացրել են իրենց մտահոգություններն ու կանխարգելիչ միջոցառումների ծրագիր առաջարկել: Հրայր Կարապետյանը չմանրամասնեց, թե ինչ պառաջարկություններ են հնչել, սակայն նշեց, որ դրանք վերաբերում են զինվորական ծառայության ընթացքին, պայմանագրային եւ սահմանագոտում ծառայությանը:**

**Մինչ նիստի մեկնարկը հանձնաժողովի անդամ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Լարիսա Ալավերդյանը տեղեկացրեց, որ բարձրաձայնելու է այն հարցը, թե ինչպես է պատահել, որ մինչեւ օրս այդքան պարզ պատճառներով ադրբեջանական կողմում գերության մեջ հայտնված զինվորներ ու քաղաքացիական անձինք ունենք: Պատգամավորն առաջարկելու է նաեւ ուժային կառույցներում ուժեղացնել քաղաքացիական վերահսկողության մեխանիզմը:**

**Հ. Հ.**

## Պարտադիր ավտոապահովագրումը՝ հոկտեմբերի 18-ից

### *Վերջնական ապահովագրավճարները՝ 19 000-110 000 դրամ*




**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Հայաստանի Կենտրոնական բանկի փոխնախագահ **Վաչե Գաբրիելյանը** եւ Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի (ԱԱԲ) գործադիր տնօրեն **Վահան Ավետիսյանը** երեկ «Նովոստի» գործակալությունում լրագրողներին ներկայացրին ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) վճարների սակագները: Հիշեցնենք, որ խոսքը ավտոտրանսպորտային միջոցների կողմից երրորդ անձանց պատճառված առողջական կամ գույքային փոխհատուցման մասին է, այլ ոչ թե մեղավոր կողմի մեքենային պատճառված վնասի փոխհատուցման:

Վաչե Գաբրիելյանը տեղեկացրեց, որ անցկացվել են հաշվարկներ առկա տվյալների հիման վրա եւ համադրվել միջազգային փորձի հետ, որի արդյունքում ԱԱԲ-ն կայացրել է իր եզրակացությունները ավտոապահովագրման վճարների հետ, որոնք էլ գրանցվել են Կենտրոնական բանկի կողմից: ԱՊՊԱ սակագների հաշվարկման համար հաշվի են առնվել ռիսկայնության հետեւյալ գործոնները՝ տրանսպորտային միջոցների տեսակ, օգտագործման նպատակ, վարորդի տարիք եւ ապահովագրական ստաժ, շարժիչի հզորություն: Որպես ռիսկային գործոններ հաշվի չեն առնվել տրանսպորտային միջոցի շահագործման վայրը, շահագործման տարեկան ինտենսիվությունը, ապահովադրի առողջական վիճակը:

Տես էջ 2

## Հայկական, վրացական եւ ադրբեջանական համատեղ ստորագրված հռչակագիր

Վրաստանի Հանրապետական կուսակցության, ադրբեջանական «Մուսավաթ» եւ Հայոց համազգային շարժում կուսակցությունների առաջնորդները Գերմանիայում անցկացվող «Ճանապարհ դեպի խաղաղություն Հարավային Կովկասում. Սեփականություն, ազատություն, բարեկեցություն» եվրոպական ազատականների կոնֆերանսի շրջանակներում համատեղ հռչակագիր են ստորագրել: Փաստաթղթի տակ իրենց ստորագրությունն են դրել ՀՀՇ վարչության նախագահ Արամ Մանուկյանը, Վրաստանի Հանրապետական կուսակցության առաջնորդ Դավիթ Ուսուպաշվիլին եւ «Մուսավաթ» կուսակցության նախագահ Իսա Ղամբարը:

«Հարավային Կովկասի ապագան հակամարտությունների խաղաղ կարգավորումը եւ լիարժեք ու լայնամասշտաբ համագործակցությունն է՝ այն վերածելով կայուն եւ զարգացող տարածաշրջանի, որն անմիջականորեն կապված է եվրոպական տարածաշրջանի ինտեգրմանը, ինչի համար էլ մենք գործադրում ենք մեր ջանքերը», ասված է հռչակագրում: Հռչակագիրը ստորագրողները պահանջում են իրենց կառավարություններից պաշտպանել այնպիսի հիմնարար ժողովրդավարական սկզբունքները, ինչպես կյանքի իրավունքը, անձնական ազատությունը, օրենքի առջեւ իրավահավասարությունը, սեփականության անձեռնմխելիությունը, ազատ շուկայական տնտեսությունը, իշխանության ազատ եւ արդար ընտրությունները եւ պետական կառավարման թափանցիկությունը:

**Հ. Ա.**

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ**

## Սլովենիայի նախագահը գալիս է Հայաստան



**Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով վաղը՝ հոկտեմբերի 10-ի երեկոյան պաշտոնական այցով Երեւան կժամանի Սլովենիայի նախագահ Դանիլո Թյուրկը տիկնոջ՝ Բարբարա Միկլիչ Թյուրկի հետ:**

**Պաշտոնական այցի շրջանակներում, ըստ պաշտոնական հաղորդագրության, հոկտեմբերի 11-ին Սլովենիայի նախագահը կայցելի Ծիծեռնակաբերդ՝ Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր: Այնուհետեւ Սլովենիայի նախագահը կհյուրընկալվի Հայաստանի նախագահի նստավայրում, որտեղ նախատեսվում են Հայաստանի եւ Սլովենիայի նախագահների առանձնազրույց, երկու երկրների պաշտոնական պատվիրակությունների մասնակցությամբ ընդլայնված կազմով բանակցություններ: Հայաստանի նախագահի նստավայրում տեղի կունենա նաեւ փաստաթղթերի ստորագրման արարողություն, որից հետո նախագահներ Սերժ Սարգսյանը եւ Դանիլո Թյուրկը հանդես կգան համատեղ մամուլի ասուլիսով:**

**Նույն օրը Սլովենիայի նախագահը կայցելի Մատենադարան եւ Հայաստանի նկարիչների միություն: Այնուհետեւ Դանիլո Թյուրկը եւ Սերժ Սարգսյանը կմասնակցեն հայ-սլովենական բիզնես ֆորումին:**

**Հոկտեմբերի 12-ին Հայաստանի նախագահի նստավայրում Սլովենիայի նախագահ Դանիլո Թյուրկն առանձնազրույց կունենա Սերժ Սարգսյանի հետ, որին կհաջորդի հրաժեշտի պաշտոնական արարողությունը:**

**Սլովենիայի նախագահի այցը Հայաստանի Հանրապետություն կեզրափակվի Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում Գարեգին Երկրորդ Ամենայն հայոց կաթողիկոսի հետ հանդիպմամբ:**

**Ա. Հ.**

## Խաղաղության Նոբելյան մրցանակը շնորհվեց իրավապաշտպան Լյու Սյաոբոյին

**2010 թվականի Խաղաղության Նոբելյան մրցանակը շնորհվել է բանտարկության մեջ գտնվող չինացի իրավապաշտպան Լյու Սյաոբոյին Չինաստանում մարդու հիմնարար իրավունքների երկարատեւ ու ոչ բռնի պայքարի համար: Այս մասին երեկ հայտարարվել է Օսլոյում: Լյու Սյաոբոն 54 տարեկան է: Վերջին 2 տասնամյակների ընթացքում Լյու Սյաոբոն համարվել է Չինաստանում խոսքի ազատության եւ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանը: 1989 թվականին նա մասնակցել է Պեկինի կենտրոնի Տյանանմեն հրապարակում տեղի ունեցած ցույցերին եւ ձերբակալվել 20 ամսով: Պետական կարգի տապալման փորձի համար Լյու Սյաոբոն 2009-ին դատապարտվել է 11 տարվա ազատազրկման:**

**2010 թվականի Խաղաղության**



**Նոբելյան մրցանակի գումարը կազմում է 10 միլիոն շվեդական կրոն (շուրջ 1 միլիոն եվրո):**

**Ի. Պ.**

## Նախագահ Մեդվեդեւը՝ Կիպրոսի հիմնախնդրի մասին

Ինչպես տեղեկացրել էինք նախորդ համարում, ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի Կիպրոս այցելությունն աննախադեպ էր, ուստի եւ պատմական: Այդին ուշիուշով հետեւում էին ինչպես Կիպրոսի թուրքական հատվածում, այնպես էլ կիպրական հիմնահարցի կարգավորումը չկարգավորվածությամբ պայմանավորող Թուրքիայում, որպեսզի Հյուսիսային Կիպրոսն իր սահմաններին կցելու հնարավորություն ունենա:

Այլ կերպ, Մեդվեդեւի այցի հանդեպ թուրքական հետաքրքրությունները պայմանավորված են Կիպրոսի հիմնախնդրին Ռուսաստանի մոտեցումով:

«Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությանը», հետեւաբար նաեւ Անկարային, առանձնակի չբավարարող այդ մոտեցումը այցով եւ այցելության օրը «Ֆիլելեֆտերիոս» թերթում հրապարակած հոդվածով նախագահ Մեդվեդեւը վերահաստատել է: Նրա հոդվածին իսկույն արձագանքել է թուրքական մամուլը, իսկ Նյու Յորքի «Թուրքական» կայքէջը դա ներկայացրել է «Ռուսաստանն արբեցրեց հույներին» վերնագրով, թե Մեդվեդեւը պատմական այցի ընթացքում բացահայտ աջակցել է հունական կողմին:



Ինչ վերաբերում է Մեդվեդեւի հոդվածին, ապա նա, ըստ նշված կայքէջի, նկատի ունենալով թուրքական զորքերի ներխուժումը, գրել է. «1974-ին Կիպրոսում տեղի ունեցած ողբերգությանը ծանոթանալիս, որի հետեւանքների վերացումն առ այսօր դեռեւս չի հաջողվում, սիրտս կսկծով լցվեց: Ռուսաստանը՝ որպես ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ, մշտապես աջակցում է Կիպրոսի հարցին արդարացի եւ մնայուն լուծում գտնելու ջանքերին: Կցանկանայինք, որ լուծումը լիներ ընդգրկուն եւ բխեր բոլոր կիպրացիների շահերից: Մեր ցանկությունը, առանց դրսի միջամտության, պատրաստի «դեղատոմսերի» եւ արհեստական ժամանակացույցի պարտադրման, հարցի միջհամայնքային բանակցությունների միջոցով կարգավորումն է: Ավելին, բանակցությունների ավարտի վերաբերյալ ժամանակացույցը նշանակելը եւ դրանք իրավարարի կեցվածքով կարգավորելը բացասաբար են անդրադառնում արդյունքների վրա: Կիպրոսի Հանրապետությունը մեր վերահաստատված բարեկամն է ու գործընկերը, այդպիսին էլ կմնա»:

**Հ. Չ.**

# Ցտեսություն, Լինդբլադ

*Շվեդ պատգամավորն ինքն իրեն անկախության մարմնացում է կարծում*

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի երեկվա նիստում, որ վերջինն էր աշնանային նստաշրջանում, շվեդ խորհրդարանական Գորան Լինդբլադը, որ նաեւ առայժմ Հայաստանի հարցով համազեկուցող է նշանակվել, խոսում էր գենդերային հարցերից, սակայն, ինչպես ինքն ասաց, իր հավանական վերջին ելույթում ԵԽԽՎ-ում ուզում էր շնորհակալություն հայտնել գործընկերներին ու գնահատել 6 տարի վեհաժողովում աշխատելու արդյունքները։

Այն, որ Լինդբլադը չի վերընտրվել շվեդական խորհրդարանում, հստակ է դարձնում, որ գոնե մի քանի տարիների ընթացքում Լինդբլադին չենք տեսնի վեհաժողովում, իսկ շվեդ-թուրքական համագործակցությունը ԵԽԽՎ-ում կարիք կունենա նոր ղեկավարի ընտրության։ Հայաստանի պարագայում էլ, փաստացի, պետք է լուծվի նոր համազեկուցող ընտրելու հարցը։

Որ հակահայկական տրամադրություններով առաջնորդվող Լինդբլադին առանձնակի ուրախությամբ չէին ընդունել Հայաստանի հարցով համազեկուցողի դերում, նորություն չէ, ինչպես եւ հենց Լինդբլադն իր վերջին ելույթում հայտարարեց, թե ոմանք թերեւս չափսոսան, որ այլեւս համատեղ աշխատելու հնարավորություն կարող է չլինել։ Ամեն դեպքում, Լինդբլադը ինքը դա շատ լավ հասկանում է, քանի որ համազեկուցողի դերում փոխարինելով ֆրանսիացի Ժորժ Կոլոմբիեին, Լինդբլադը կարծես թե մինչեւ լիազորությունների ավարտը հնարավորություն չի ստանալու այցելել Հայաստան։

Խնդիրն այն է, որ նման մի իրավիճակի մասին է հենց շվեդ խորհրդարանականը նամակ հղել ԵԽԽՎ-ում հայաստանյան պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանին։ Նամակում Լինդբլադը նշել էր, թե տարօրինակ է համարում, որ հոկտեմբերին Հայաստանում անցկացվելիք «հանուն ժողովրդավարության» համաժողովի շրջանակներում ժամանակ չի հատկացվում ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի Հայաստանի հարցով համազեկուցողների հետ հանդիպումներ կազմակերպելու համար։

Սեփական բացառիկ կողմնակալությունը մի կողմ թողած՝ Լինդբլադը գնահատականներ էր տվել հայկական ժողովրդավարությանն ու պետությանը, ներկայացնելով նաեւ, որ դեռեւս 2010թ.-ի հունիսից հետաձգվող համազեկուցողների այցը Հայաստան չի կայանում Ազգային ժողովի նախագահի նամակի համաձայն։ Լինդբլադն, ի շարս այլ պատճառների, թերեւս ամենայն իրավացիությամբ նշել է նաեւ, որ իր անձը եւս պատճառ է դարձել հետաձգելու համազեկուցողների այցը Հայաստան։

Առավել հետաքրքրական է, որ թուրքամետ ու ադրբեջանամետ դիրքորոշումների արտահայտման առատությամբ աչքի ընկած Լինդբլադը, առանց իմանալու հաջորդ համազեկուցողի ով լինելը, իրեն թույլ է տվել արդեն իսկ հայտարարել, թե իրենից հետո գալու է «ավելի քիչ անկախ» մեկը։ Ամեն դեպքում հոկտեմբերի 30-ից Լինդբլադը չի լինի այլեւս ԵԽԽՎ-ական, հետեւաբար՝ չի կարող լինել Հայաստանի հարցով համազեկուցող։

Հասկանալի է, որ Հայաստանի հարցով համազեկուցողը չի կարող ընտրվել Հայաստանի հանդեպ սիրո չափանիշներով, սակայն Լինդբլադի պարագայում հստակ է, որ ոչ թե Հայաստանում իրադրության գնահատականներ էին հնչելու, այլ գրեթե թուրքական կամ ադրբեջանական տեսակետներ։

Ինչ վերաբերում է ԵԽԽՎ-ում մեկ այլ, առայժմ անարդյունք նախաձեռնության, ասել է թե՝ ղարաբաղյան հարցով ենթահանձնաժողովի «վերակենդանացման» փորձերին, որ ստանձնել է ԵԽԽՎ նախագահ Մեվլութ Չավուշօղլուն, հստակ է, որ այս ճակատում էլ Հայաստանը պահպանում է ենթահանձնաժողովի աշխատանքն անարդյունավետ գնահատելու իր մոտեցումը։

ԵԽԽՎ աշնանային նստաշրջանի շրջանակներում երկու հանդիպում տեղի ունեցավ հայկական եւ ադրբեջանական պատվիրակությունների միջեւ՝ Չավուշօղլուի նախաձեռնությամբ։ Հանդիպումից հետո հայկական պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանը հայտնել էր, թե որոշում է կայացվել շարունակելու նման շփումները։

Ըստ հանդիպման արդյունքների, ԵԽԽՎ նախագահը վեհաժողովի բյուրոյին կներկայացնի ենթահանձնաժողովի գործունեությունը վերականգնելու ժամկետների երկարաձգման առաջարկ, եւ ամենայն հավանականությամբ, նույն ձեւաչափով քննարկում կկազմակերպվի դեկտեմբերին Փարիզում։

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Երեւանում բացել առաջին մայրաքաղաք Վանին նվիրված թանգարան

«Մոսկվայի տուն» մշակութագործարարական կենտրոնում հոկտեմբերի 7-9 անցկացվող Վան քաղաքի առաջին հիշատակության 2865-ամյակին նվիրված եռօրյա միջազգային գիտաժողովի նպատակն է պատմական եւ գիտական հարթության վրա ներկայացնել Հայաստանի առաջին մայրաքաղաքի պատմությունը, դերն ու նշանակությունը։ «Վասպուրական» հայրենակցական միության նախաձեռնությամբ ընթացող գիտաժողովի ընթացքում հնչած լավագույն զեկուցումները հետագայում կամփոփվեն գրքում, որը կհրատարակվի նաեւ ռուսերեն եւ անգլերեն լեզուներով։

«Վասպուրական» հայրենակցական միության նախագահ **Գագիկ Բաղդասարյանի** հավաստմամբ՝ Վանին նվիրված գիտաժողովը կրելու է ավանդական բնույթ։ Բացի գիտաժողովից՝ նախատեսվում է Երեւանում Հայաստանի առաջին հանրապետությանը նվիրված թանգարան բացել։ Այժմ ցուցանմուշներ են հավաքվում։ Կազմվել է խումբ, որը շրջում է երեւանյան թանգարաններում, հանդիպում Վանից գաղթած հայ ընտանիքների հետ՝ մասունքներ, Վանից բերված իրեր գտնելու հույսով։

Կալիֆոռնիայի համալսարանի Լոս Անջելեսի Նարեկացու անվան հայագիտության բաժնի վարիչ, պրոֆեսոր **Փիթեր Քաուին** երկար ժամանակ ուսումնասիրում է Վան քաղաքի եւ Վանի թագավորության պատմությունը։ Բազմիցս այցելել է Վան։ Նրա վրա հատկապես մեծ ազդեցություն են թողել քաղաքում դեռեւս պահպանված հայկական տաճարներն ու հատկապես Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին, որը նա դասում է համաշխարհային ճարտարապետության գլուխգործոցների շարքին ոչ միայն կառույցի տեսանկյունից, այլեւ բնության հետ ներդաշնակության առումով։

Պատմաբան **Բաբկեն Հարությունյանն** էլ կարեւորելով Վանի դերը հայոց պատմության մեջ, հատկապես առանձնացրեց հայրենիքում կուսակցության ստեղծումը։ «Վանը առանձնանում է նրանով, որ այնտեղ ստեղծվեց մեր առաջին կուսակցությունը։ Հայ հեղափոխական դաշնակցությունն ու Հնչակյան կուսակցությունը ձեւավորվեցին դրսում, իսկ Արմենական-ռամկավարները՝ իրենց հայրենիքում։ Վանը ոչ միայն մշակույթի, այլեւ գաղափարախոսության, ազգային ազատագրական պայքարի հանգրվան է», ասաց նա։

ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն **Աշոտ Մելքոնյանն** առանձնացրեց Վանի հերոսամարտը՝ հավելելով, որ Արեւմտյան Հայաստան գաղթած վանեցիները շրջանառության մեջ դրեցին «Գալ տարի Վանում» արտահայտությունը՝ հավատով, որ մի օր կրկին կվերադառնան իրենց հայրենիքը։

Արմենական-ՌԱԿ կուսակցության վարչության անդամ, պատմաբան Սուրեն Սարգսյանը, որի զեկուցումը լսվեց ուշադրությամբ, շեշտեց գաղափարապես միմյանցից տարբեր երեք կուսակցությունների միավորումը՝ հանուն ազգային գաղափարի, որի շնորհիվ կայացավ Վանի հերոսամարտն, ու 200.000 հայեր փրկվեցին թուրքի յաթաղանից։

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Պարտադիր ավտոապահովագրումը՝ հոկտեմբերի 18-ից

1-ին էջից

Ըստ **Վաչե Գաբրիելյանի**՝ սահմանված սակագների նվազագույն եւ առավելագույն սահմանները գտնվում են 19 հազար դրամից մինչեւ 110 հազար դրամի սահմաններում։ Ըստ ԿԲ փոխնախագահի՝ ապահովագրական ընկերությունները բարձր շահութաբերություն չեն ունենալու՝ 5-6 տոկոս, եւ կարող են մրցակցել 5-6 հազար դրամի սահմաններում։ Նվազագույն սակագնի դեպքում դա 25 հազար դրամի, առավելագույնի դեպքում՝ 106 հազար դրամի ժամանակ։

Վաչե Գաբրիելյանը տեղեկացրեց, որ առավելագույն՝ 106 հազար դրամ պետք է վճարի, ենթադրենք, «Համմեր» մեքենայի 23 տարեկանից ցածր վարորդը, որն ունի 3 տարուց ցածր վարելու փորձ եւ այդ մեքենան վարում է որպես տաքսի։ Իսկ ընդհանրապես, մինչեւ 80 ձիաուժ հզորություն ունեցող «Գազ» 2101-2109, «Վազ», «Մոսկվիչ», «Օկա», 80-141 ձիաուժ ունեցող «Վազ» 2110-2115, «Նիվա», «Վոլգա», VW Golf, Mercedes C180, E180, Opel Vectro, Toyota Corolla, Kia մեքենաների ավտոապահովագրավճարը սկսվում է միջինը 25 հազար դրամից, մինչեւ 32 հազար դրամ։ Ըստ ԿԲ փոխնախագահի, այս երկու խմբերում ընդգրկված է ավտոտրանսպորտային միջոցների մոտ 80 տոկոսը։ Վաչե Գաբրիելյանը հայտարարեց նաեւ, որ Կենտրոնական բանկի համապատասխան որոշումը՝ պարտադիր ավտոապահովագրության մասին, ուժի մեջ կմտնի 10 օրից, ինչը նշանակում է, որ հոկտեմբերի 18-ից ապահովագրական ընկերությունները կսկսեն կնքել ապահովագրական պայմանագրերը։

Արդեն գրանցվել են 370 ապահովագրական գործակալներ, որոնց թիվը, ԿԲ փոխնախագահի հավաստմամբ, կավելանա եւ մինչեւ ամսվա վերջ կհասնի 500-ի։ Նրանք բոլորը գրանցվելու են Կենտրոնական բանկում, եւ ամեն մի անձ կարող է ԿԲ կայքից տեղեկանալ, տվյալ գործակալը գրանցվա՞ծ է, թե՞ ոչ։

**Վահան Ավետիսյանն** ասվածին ավելացրեց, որ սահմանված են պայմանագրերի կնքման պայմաններն ու ձեւերը։ Դրանք բոլորը նույնն են լինելու, որի նպատակն է ապահովել դրանց հեշտ ընկալելը։ ԱԱԲ տնօրենի հավաստմամբ, ապահովագրական շուկայում պարտադիր ապահովագրության արդյունքում կշրջանառվեն 10-12 մլրդ դրամ։ Այդ գումարի 72-78 տոկոսը, ԱԱԲ հաշվարկներով ուղղվելու է փոխհատուցումներին։ Պատասխանելով «**Ազգի**» հարցին, թե ի՞նչ պատասխանատվություն է կրում մեքենայի սեփականատերը, եթե սահմանված ժամկետում մեքենան չի ապահովագրում դրա այս կամ այն պատճառով չօգտագործվելու դեպքում, Վահան Ավետիսյանն ասաց, որ ավտոտրանսպորտային միջոցի պարտադիր ապահովագրությունից խուսափելու դեպքում մեքենան վարելիս տուգանքը կազմում է 50 հազար դրամ։ Եթե մեքենան չի օգտագործվում եւ չի ապահովագրվում, ապա դարձյալ տուգանվում է՝ յուրաքանչյուր 10 չապահովագրված օրվա համար 5 հազար դրամ, բայց ոչ ավելի, քան տարեկան 100 հազար դրամը։ Չօգտագործվող մեքենայի չապահովագրվելու միակ հիմքը այն հաշվառումից հանելն է։

Մամուլի ասուլիսի ժամանակ տեղեկացվեց, որ վերջնական ապահովագրավճարների չափերը կհրապարակվեն ԱԱԲ կայքում։

# Դոկս. Ռիտա Գույումճյանի դասախոսությունները Կալիֆոռնիայում



*Ձախից աջ՝ դոկս. Փիրումյան, դոկս. Ավետիսյան, տիկին Ավետիսյան, դոկս. Գույումճյան, դոկս. Քիթաբջյան եւ Սագի Կոսյան։*

**Կալիֆոռնիայի հայկական համայնքները ոգեւորվածությամբ են դիմավորել կանադահայ գիտնական ու հոգեվերլուծաբան դոկս. Ռիտա Սուլահյան-Գույումճյանին, որն ընդհանրապես հայերի դեմ գործված ցեղասպանության եւ մասնավորապես Կոմիտաս վարդապետի հոգեկան խանգարումների մասին դասախոսությունների շարքով հանդես է եկել Գլենդելում (տեղի հանրային գրադարանում կազմակերպությամբ Թեքեյան մշակութային միության լոսանջելեսյան մասնաճյուղի) եւ Ֆրեզնոյում։ Ըստ ստացված հաղորդագրության, նա ներկայացրել է վերջերս լույս տեսած իր եռերգությունը, ինչպես նաեւ իր դրական գնահատականների արժանացած «Մտագարության հնագիտությունը» աշխատությունը՝ Կոմիտաս վարդապետի կենսագրության մասին, որը փափուկ կազմով վերջերս վերահրատարակել է Կոմիտաս ինստիտուտը։**

**Դոկս. Գույումճյանը, որ դասավանդում է Մոնրեալի Մկգիլ համալսարանում, մեր ժամանակների բեղուն ստեղծագործողներից է։ Եղեռնի 95-րդ տարելիցի առթիվ գրած նրա եռերգության մաս են կազմում.**

**ա) Արամ Անտոնյանի պատմության թարգմանությունը, խմբագրումը եւ ծանոթագրությունների հավելումը («Աքսոր, տրավմա եւ մահ։ Դեպի Չանկիրի Կոմիտաս վարդապետի հետ» (200 էջ, հրատ. Կոմիտաս ինստիտուտի եւ Թեքեյան մշակութային միության),**

**բ) «Թեոդիկի կենսագրությունը» (254 էջ, հրատ. Կոմիտաս ինստիտուտի եւ Թեքեյան մշակութային միության).**

**գ) «Վերապրողը։ Արեմ Անտոնյանի կենսագրությունը» (96 էջ, հրատ. Կոմիտաս ինստիտուտի եւ Թեքեյան մշակութային միության)։**

**Առաջին գրքում Արամ Անտոնյանը, որ հետագայում Փարիզում հիմնել է Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունների կենտրոնը, պատմում է 1915 թվի ապրիլի 24-ին հայ համայնքի հայտնի գործիչների ու մտավորականների ձերբակալությունների մասին։ Երկրորդում առաջին անգամ անգլերենով ներկայացվում են հայ մեծ մտավորական Թեոդիկի կենսագրությունը եւ նրա կոթողային աշխատությունը՝ նվիրված ապրիլի 24-ի զոհերին (թարգմանել է Արա Մելքոնյանը Կոմիտաս ինստիտուտից)։**

**Բացի վերոնշյալ վայրերից՝ դոկս. Գույումճյանը Կոմիտաս վարդապետին նվիրված դասախոսությամբ հանդես է եկել նաեւ Արարատ-Էսքիճյան թանգարանում։ Ունկնդիրները մեծ հետաքրքրասիրությամբ են հետեւել նրա ելույթներին, որոնցից հետո ծավալվել է հարց ու պատասխանի ակտիվ երկխոսություն։**

**Գույումճյանի գրքերի մասին հավելյալ տեղեկությունների համար խորհուրդ է տրվում այցելել books@gomidas.org կամ info@gomidas.org կայքերը։**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

| | |
|---|---|
| Գլխաւոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ | / հեռ 521635 |
| Խմբագիր ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ | / հեռ 529221 |
| Հաշվապահութիւն (գովազդ) | / հեռ 582960 |
| Լրագրողների սենեակ | / հեռ 581841 |
| Համակարգչ. ծառայութիւն | / հեռ 582483 |
| *Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* | / հեռ 529353 |

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

# «Ադրբեջանի օմբուդսմենը կտրականապես չի համագործակցում մեզ հետ»

## Ասում է Արմեն Հարությունյանը



Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան (ՄԻՊ) **Արմեն Հարությունյանը** երեկ հանդիպեց լրագրողների հետ: Արմեն Հարությունյանի գլխավորությամբ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի լրամշակման նպատակով ստեղծված աշխատանքային խումբը համալրվել է քաղաքացիական հասարակության ոլորտը ներկայացնող նոր փորձագետներով: Աշխատանքային խումբը բաղկացած է լինելու 10 հոգուց: Ա. Հարությունյանը տեղեկացրեց, որ աշխատանքային խմբի առաջին նիստը կայանալու է հոկտեմբերի 11-ին: «Կարծում եմ` օրենքի կատարելագործման ուղղությամբ այս աշխատանքային խումբը կկարողանա լուրջ քայլեր անել», հավելեց օմբուդսմենը: Վերջինս նաեւ ներկայացրեց ՄԻՊ գրասենյակի այս տարվա հունվար-սեպտեմբեր ամիսների վիճակագրությունը: 9 ամիսների ընթացքում մարդու իրավունքների պաշտպանը ստացել է ավելի քան 2272 դիմում-բողոք , որոնցից 857-ը` գրավոր: Գրավոր դիմումներից 43-ը կոլեկտիվ դիմում-բողոքներն են: Պաշտպանին գրավոր դիմում-բողոքներով դիմած անձանց թիվը կազմում է 1725: Նշված ամիսների ընթացքում դիմում-բողոքներով պաշտպանին դիմել է 3140 անձ: Ըստ վիճակագրական տվյալների` 38 դիմում-բողոք դրական լուծում է ստացել, որի արդյունքում էլ վերականգնվել են 256 անձանց խախտված իրավունքները: Հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՄԻՊ գրասենյակից պետական մարմիններին ուղղված նամակների թիվը կազմում է 702:

Երեկ Արմեն Հարությունյանն անդրադարձավ նաեւ հանրահավաքներին վերաբերող օրենքի նախագծին. «Մենք արդեն պատրաստել ենք հանրահավաքների հետ կապված օրենքը»: 2 շաբաթ առաջ ՄԻՊ գրասենյակն օրինագիծն ուղարկել է Վենետիկի հանձնաժողովին, օրինագիծը գտնվում է նաեւ ԵԱՀԿ-ում: «Մեր օրենքի նախագծերի փորձագիտական ուսումնասիրությունով հիմնականում զբաղվում են այս երկու կազմակերպությունները:: Հոկտեմբերին Վենետիկի հանձնաժողովի 2 փորձագետներ են հրավիրվել Հայաստան, որպեսզի այստեղ աշխատենք նրանց հետ: Երբ կունենանք այդ փորձագետների վերջնական կարծիքը, ըստ դրա էլ կհամապատասխանեցնենք օրենքի վերջնական նախագիծը, որն էլ կներկայացնենք խորհրդարանին ու կառավարությանը», ասաց Արմեն Հարությունյանը:

Պատասխանելով լրագրողներից մեկի հարցին, որը վերաբերում էր Ֆրանսիական համալսարանից հեռացված դասախոսներին, Արմեն Հարությունյանը նշեց, որ աշխատանքից հեռացված դասախոսների դիմումին իրենք պատասխանել են. «Մենք արձագանքել ենք, սակայն մեր օրենքով, եթե որեւէ հարց քննվում է դատարանում, ապա դրանով մենք այլեւս չենք զբաղվում»: Արմեն Հարությունյանը բացատրեց, որ դասախոսները միաժամանակ դիմել են նաեւ դատարան.«Քանի որ նրանց գործով զբաղվում էր դատարանը, ապա մենք դրանով զբաղվելու իրավունք այլեւս չունեինք»:

Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձավ նաեւ բանակում զինծառայողների մահվան դեպքերին, որոնք վերջին շրջանում հաճախակի են դարձել: ՄԻՊ գրասենյակը կատարել է ուսումնասիրություններ, որոնք պատրաստվում է ներկայացնել պաշտպանության նախարարությանը: «2-3 օր առաջ եմ հանդիպել պաշտպանության նախարարին: Բանակը մեր հասարակությունից դուրս չի գործում, բանակը խտացված հայելին է մեր հասարակության: Մենք պետք է զբաղվենք ամբողջ հասարակության առողջացմամբ», ասաց Արմեն Հարությունյանը: Նա տեղեկացրեց, որ այս տարվա 9 ամիսների ընթացքում բանակից ստացել են 39 բողոք 40 անձից: Խոսելով բանակում կատարվող ինքնասպանության դեպքերի մասին` Արմեն Հարությունյանը նշեց, որ դա բոլորիս համար էլ մտահոգիչ է, եւ նախարարությունը պետք է միջոցներ ձեռնարկի:

Ինչ վերաբերում է Ադրբեջանում գերի ընկած Մանվել Սարիբեկյանի մահվան հանգամանքներին, Ա. Հարությունյանն ասաց. «Ադրբեջանի օմբուդսմենը կտրականապես չի համագործակցում մեզ հետ, ստիպված դիմում ենք միջազգային կառույցներին»: Մանվել Սարիբեկյանի մահվան հանգամանքները պարզելու նպատակով Հայաստանի ՄԻՊ-ը դիմել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեին եւ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների գլխավոր հանձնակատարին:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Հյուսիս-հարավ ճանապարհի կառուցմանը կներգրավվեն նաեւ ուսանողները

## Կառուցման աշխատանքներն արդեն սկսվել են

Տրանսպորտի եւ կապի նախարարությունում երեկ եռակողմ հուշագիր ստորագրեցին «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպության ՊՈԱԿԻ տնօրեն **Ֆելիքս Փիրումյանը**, «Էգիս Բիսոմ ինտերնեյշնլ» ֆրանսիական կազմակերպության ծրագրի ղեկավար **Ջոն Ֆրիզերը** եւ Երեւանի ճարտարապետաշինարարական համալսարանի ռեկտոր **Հովհաննես Թոքմաջյանը**:

Մինչ հուշագրի ստորագրման արարողությունը տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանը լրագրողներին ասաց, որ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցման աշխատանքներն արդեն սկսվել են, տեղի են ունեցել առաջին տրանշի նախագծման, երկրորդ եւ երրորդ տրանշների վերահսկման աշխատանքների մրցույթները, որոնցում հաղթել է ֆրանսիական «Էգիս Բիսոմ ինտերնեյշնլ» ընկերությունը: Նախարարի խնդրանքով ընկերությունը համաձայնել է ճանապարհի կառուցման ընթացքում ներգրավել նաեւ Երեւանի ճարտարապետաշինարարական համալսարանի բարձր կուրսերի եւ մագիստրատուրայի ուսանողներին` 78 հոգու: Եռակողմ հուշագրի ստորագրումը հենց այս պայմանավորվածության վավերացումն էր:

Հյուսիս-հարավ ճանապարհի կառուցման մանրամասները ներկայացրեց Ֆելիքս Փիրումյանը: Նա տեղեկացրեց, որ 556 կմ երկարությամբ այդ ճանապարհը համապատասխանելու է եվրոպական չափանիշներին, լինելու է արագընթաց` 100 կմ/ժ արագությամբ, անցնելու է մեր երկրի ամբողջ տարածքով, կապելով Մեղրին Բավրայի հետ: Երեւանից Աշտարակ եւ Երեւանից Արարատ հատվածները ընդգրկված են կառուցման առաջին տրանշի մեջ, որի արժեքը կկազմի 70 մլն դոլար: 60 մլն դոլարը տրամադրել է Ասիական զարգացման բանկը, 10 մլն դոլարը` համաֆինանսավորել Հայաստանի կառավարությունը: Մինչ աշխատանքները սկսելը, ինչպես հայտնեց «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ՊՈԱԿ-ի տնօրենը, տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանը դիմել է աշխարհի 15 առավել հայտնի ճանապարհաշինական ընկերություններին, մեր երկրում հավատարմագրված դեսպաններին, Հայաստանի արտգործնախարարության միջոցով` արտերկրում Հայաստանի դեսպանատներին` արտերկրի լավագույն փորձն այս ճանապարհի կառուցման աշխատանքներում ներգրավելու համար:

Ֆելիքս Փիրումյանը նաեւ հայտնեց, որ առաջին տրանշի շինարարության տարբեր հատվածներում կկառուցվի երկու տեսակի ճանապարհ` ասֆալտբետոնե եւ միայն բետոնային ծածկով: Կախված այն բանից, թե որն ավելի դիմացկուն կլինի մեր բնակլիմայական պայմաններում, այդ տեխնոլոգիայով էլ կշարունակվեն կառուցվել ճանապարհի մյուս հատվածները:

«Էգիս Բիսոմ ինտերնեյշնլ» ֆրանսիական կազմակերպության ծրագրի ղեկավար Ջոն Ֆրիզերը իր ուրախությունը հայտնեց ճանապարհաշինական ծրագրերում Երեւանի ճարտարապետաշինարարական համալսարանի ուսանողների ընդգրկմամբ: Նա նաեւ հայտնեց, որ իր ներկայացրած կազմակերպությունն իրականացնելու է առաջին տրանշի նախագծման, երկրորդ եւ երրորդ տրանշների վերահսկման աշխատանքները, որոնցում ներգրավված են 10 միջազգային եւ 19 տեղի փորձագետներ:

Երեւանի ճարտարապետաշինարարական համալսարանի ռեկտոր Հովհաննես Թոքմաջյանը կարեւորեց, որ իր ղեկավարած բուհի ուսանողները կմասնակցեն ճանապարհի կառուցման ամբողջ ընթացքին` նախագծումից մինչեւ շինարարական աշխատանքներ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Հայ-թուրքական արձանագրության ստորագրումից մեկ տարի անց

## Գնահատականներ են տալիս պատգամավորները

Հոկտեմբերի 10-ին կլրանա մեկ տարի, երբ Ցյուրիխում Հայաստանի եւ Թուրքիայի արտաքին գործերի նախարարներ Էդվարդ Նալբանդյանն ու Ահմեդ Դավութօղլուն ստորագրեցին հայ-թուրքական արձանագրությունները: Այժմ արձանագրությունները սառեցված են, սակայն գտնվում են ՀՀ ԱԺ խորհրդարանի օրակարգում:

Երեկ խորհրդարանական խմբակցությունների ներկայացուցիչները ԱԺ-ում կայացած ճեպազրույցի ժամանակ ամփոփեցին եւ գնահատականներ տվեցին հայ-թուրքական արձանագրություններին: «Ժառանգություն» խմբակցության ղեկավար **Ստյոպա Սաֆարյանի** մեկնաբանությամբ` «Հայաստանի խորհրդարանն իր օրակարգում պահում է արձանագրությունները, սակայն օրակարգ չի ներառում ԼՂՀ օրինագծի ճանաչման հարցը: Իհարկե, դրսից կարող են պարտադրել հայ-թուրքական հարաբերություններ, հարկային պարտավորությունների հարաբերակցություն, բայց Հայաստանը իր ներսում չի կարողանում համարձակություն ունենալ եւ իր ազգային շահերից բխող օրինագիծ մտցնել օրակարգ»:

Անդրադառնալով արեւմտյան մամուլում Շվեյցարիայի միջնորդությամբ հայ-թուրքական նոր գործընթացի սկսման վերաբերյալ լուրերին, Սաֆարյանն ասաց, որ հանդիպել է հոդվածների նաեւ իտալական մամուլում:

«Թե ինչպիսի որակ ունի իտալական մամուլն ըստ Էդվարդ Նալբանդյանի` չեմ կարող ասել, սակայն ակնհայտ է, որ մեռելածին արձանագրությունները կենդանություն են առնում, եւ միտումներ կան Գյուլի խոսքերով լուռ դիվանագիտությամբ լուծելու հայկական հարցը»:

ՕԵԿ պատգամավոր **Հովհաննես Մարգարյանի** մեկնաբանությամբ` հայ-թուրքական հարաբերություններն ու արձանագրությունները նպաստեցին երկրի հեղինակության բարձրացմանը: «Ինչ վերաբերում է արձանագրություններին, ապա բոլորս էլ համոզվեցինք, որ դրանք նախապայմաններ չեն պարունակում»:

ՀՀԿ-ական **Արտակ Զաքարյանն** էլ հավելեց, որ Հայաստանն ընկալվեց որպես տարածաշրջանում կայունություն եւ անվտանգություն ապահովող պետություն եւ վստահելի գործընկերոջ հեղինակություն ձեռք բերեց:

### Նամակ միջազգային կազմակերպություններին` դատապարտելու հայ գերու մահը

«Ժառանգություն» խմբակցությունը Ադրբեջանում գերի ընկած հայ հովիվ Մանվել Սարիբեկյանի սպանության վերաբերյալ նամակ է գրել ՄԱԿ, ԵԽԽՎ, ԵԽ եւ ԵԱՀԿ նախագահներին: Նամակը, որի տակ իրենց ստորագրությունն են դրել խորհրդարանական բոլոր ուժերը, պահանջում է անցկացնել արդար հետաքննություն Հայաստանի համապատասխան մարմինների ընդգրկմամբ: Խմբակցության պատգամավոր **Լարիսա Ալավերդյանի** մեկնաբանությամբ` թեպետ Չավուշօղլուն ԵԽԽՎ-ում ներկայանում է ոչ թե որպես միջազգային կազմակերպության նախագահ, այլ Թուրքիայի իշխանական կուսակցության պատգամավոր, սակայն անգամ Չավուշօղլուի ազգության պարագայում պետք է պահանջել եւ ստանալ համապատասխան արձագանք:

«Մանվել Սարիբեկյանն ինքնասպանություն չի գործել, նրան սպանջամահ են արել: Պետք է անհապաղ պարզել կատարվածի մանրամասները, որովհետեւ չպատժված հանցագործությունը ծնում է նոր հանցագործություն», ասաց Հովհաննես Մարգարյանը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Հովհաննես Մարգարյանը չի մոռանում

Որոշ գյուղերում դեռեւս պահպանվել է ավանդույթ, երբ հարսանիքի կամ քեֆ-ուրախությունների ժամանակ հյուրընկալող կողմը մեկին նշանակում է, որ ցուցակ կազմի, թե ով ինչ նվիրեց եւ դա որքան արժեր, որպեսզի պատասխանի ժամանակ էլ նույն որակի եւ նույն գումարի մի նվեր էլ իրենք տանեն: Փաստորեն այս ավանդույթը գործում է ոչ միայն գյուղերում այլեւ խորհրդարանում:

Բացի նրանից, որ ՕԵԿ-ը բոյկոտեց եւ չմասնակցեց ԱԺ փոխխոսնակի ընտրություններին` բացառությամբ Գագիկ Բաղդասարյանի, որը ներգրավված էր հաշվիչ հանձնաժողովում, կուսակցության պատգամավորները նախկին օեկ-ական, ներկայումս «Բարգավաճ Հայաստան» կուսակցության պատգամավոր Սամվել Բալասանյանին այդպես էլ չշնորհավորեցին: «Ինչո՞ւ չշնորհավորեցիք ձեր նախկին թիմակցին ընտրվելու կապակցությամբ» հարցին Հովհաննես Մարգարյանը պատասխանեց. «Ես չշնորհավորեցի, որովհետեւ ինքն էլ ինձ չշնորհավորեց, երբ ընտրվեցի ԱԺ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ», ասաց նա:

Հ. Հ.

# Բաքուն Դաշնակցությանը անցագիր կտա՞

Հոկտեմբերի 11-12-ին Բաքվում կկայանա Ընկերվար միջազգայնականի (Սոցինտերնի) ԱՊՀ-ի, Կովկասի եւ Սեւ ծով հանձնախմբերի ժողովը: Հիշեցնենք, նմանօրինակ նախորդ ժողովը կայացավ Երեւանում:

Հանձնախմբերի ժողովին, որի օրակարգում են «տարածաշրջանային հակամարտությունները, տարածաշրջանի երկրներում զարգացումները եւ սոցիալ-ժողովրդավարական զարգացման հնարավորությունները», պետք է մասնակցի նաեւ ՀՅԴ պատվիրակությունը: Արդեն իսկ հայտնի է դաշնակցական պատվիրակության կազմը` ՀՅԴ բյուրոյի անդամ, հանձնախմբի համանախագահ Մարիո Նալբանդյան եւ ՀՅԴ բյուրոյի Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյան. նրանք պատրաստակամություն են հայտնել մեկնելու Բաքու:

Սակայն ՀՅԴ պատվիրակության մասնակցությունը ժողովին առ այսօր երաշխավորված չէ, քանի որ Թբիլիսի-Բաքու ավիաթռիչք իրականացնող «Ազալ» ադրբեջանական ավիաուղիների թբիլիսյան գրասենյակը պահանջում է նրանց այցի վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել Վրաստանում Ադրբեջանի դեսպանատնից կամ Ադրբեջանի ներքին գործերի նախարարությունից: Այժմ այս խնդիրների լուծմամբ զբաղվում է Սոցինտերնը:

Հավելենք նաեւ, որ 2008-ին դաշնակցական Մարիա Թիթիզյանն ընտրվեց Սոցինտերնի փոխնախագահ, նույն թվականին Մարիո Նալբանդյանը ընտրվեց կազմակերպության ԱՊՀ-ի եւ Կովկասի, ինչպես նաեւ Սեւ ծովի հանձնախմբերի համանախագահ:

Հ. Ա.

ԱԶԳ

## Անդրադարձ

# Ո՞ւր է Հայաստանի ցորենը

Հացով որոշակի ինքնաբավությունը նպատակ հռչակելով աստիճանաբար հայտնվում ենք աննպատակ իրավիճակում:

Օրեր առաջ հայաստանյան հանրությունը ականատեսն ու ունկնդիրը դարձավ իրեն անչափ հուզող հարցի արծարծման. ՀՀ կառավարությունն աննախադեպ քայլեր է ձեռնարկում երկիրը սեփական պարենային ցորենի որոշակի քանակով ապահովելու ուղղությամբ, այդ նպատակով ՌԴ-ում ձեռք բերելով 900 տոննա էլիտար հացահատիկի սերմացու: ՀՀ գյուղնախարարը այս առումով նշեց, որ 1 հա-ի հաշվով 300 կգ ցանքը, մի շարք նախապայմանների բավարարման պարագայում, երաշխավորում է բարձր բերք: Ցավոք՝ չնշեց ինչքան, քանզի ՌԴ-ի հացահատիկային դաշտերում ստացվող 2.5-3 տ բերքատվությունը հարաբերականորեն կարելի է բարձր համարել:

Ընթերցողին ներկայացնենք բերված թվերի պարզ վերլուծությունը: Ստացվում է, որ 900 տոննայով ցանք կարելի է կատարել 3000 հեկտարի վրա, ուր միջինը 3 տ բերքի պարագայում ստացվում է 9000 տ ցորեն, որը ՀՀ ակնարկվող 600 հազար տոննա պահանջարկի 1,5 տոկոսն է կազմում, սերմացուի մոտ 15 տոկոսը: ՀՀ-ում դժվար գտնվի մեկը, որ այս թվերը ոգեւորություն ներշնչող համարի: Թեեւ մամուլի որոշ միջոցներ արդեն հեռարձակել են գյուղհամայնքների ու հողագործների խոսքերը տրվելիք 1 միավոր սերմացուի դիմաց եկող աշնանը 2 միավոր վերադարձնելու աննպատակահարմարության շուրջը, այսուհանդերձ նախաձեռնությանը հաջողություն մաղթենք, հուսալով, որ անշահախնդիր ամեն ինչ արվում է հայաստանցի հողագործին օգնելու նպատակով:

ՀՀ գյուղացուն օգնելու քայլեր անշուշտ իրականացվում են, թեեւ խոչընդոտներ ստեղծելը, ասենք՝ ջրավարձի բարձրացումը, առավել է խփում գյուղացու աշխատանքին: Այսուհանդերձ ինչ-որ բաներ արվում են, որոնք, թող ների ասել, տեսանելիորեն չեն բարելավում գյուղացու ու գյուղական համայնքների վիճակը, քանզի չեն բխում բուն գյուղքաղաքականության էությունից, ՀՀ գյուղատնտեսությունը կողմնորոշում են դեպի այլոց բանջարա-բոստանաայգեգործական կցորդը դառնալուն, բանանասրճա-թեյայինի մի նոր տարբերակի: Կարծիքը խիստ համարողների համար նշեմ, որ գնահատականը անգամ մեղմ կարելի է նկատել, քանզի տարեցտարի մեր պարենային անվտանգությունն առավել է կախման մեջ դրվում ներկրումներից, հայ գյուղացուն հողից հոգնեցնելու հետեւանքով: Որեւէ լուրջ հարցադրում, թե ինչո՞ւ, դնելու ցանկություն պարզապես չկա, այն իրենցից հեռու են վանում ՀՀ գյուղի համար պատասխանատու 2 նախարարությունները՝ տարածքային կառավարման ու գյուղատնտեսության պետական կառույցները:

Արված գնահատականը հաստատվում է ՀՀ ԱՎԾ-ի տարեկան հաղորդումների գյուղոլորտին վերաբերող վիճակագրությանը ծանոթանալով: ՀՀ-ում բուսաբուծությանը բաժին է ընկնում գյուղարտադրանքի երկու երրորդը, անասնաբուծությանը՝ մեկ երրորդը, երբ զարգացած գյուղոլորտ ունեցող երկրներում գրեթե հակառակն է: ՄԱԿ-ի պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության մի ուսումնասիրության համաձայն՝ ՀՀ-ից արտահանվող 5 հիմնական պարենապրանքներն են ալկոհոլը, ծխախոտը, աղացած ու հատիկ սուրճերը եւ տոմատը: Իսկ ահա տեսեք, թե 10 հիմնական միս արտահանող երկրների ցանկում ում ենք հանդիպում. Բրազիլիայից ու ԱՄՆ-ից հետո երրորդը Հոլանդիան է, Գերմանիային ու Ավստրալիային հաջորդում է Դանիան, Ֆրանսիային՝ Բելգիան, Կանադային՝ Նոր Զելանդիան: Ուղղակի զարմանալ կարելի է, թե 43 հզ. ք.կմ տարածք ունեցող Դանիան ինչպես է կարողանում 4,5 մլն տոննա հացահատիկ արտադրել: «Զարմանալ կարելի է» ասում եմ, թեեւ տեղյակ եմ, որ վարելահողերի շուրջ 40 տոկոսը հացահատիկի մշակման տակ են դնում, ուր 1 հեկտարից 7-8 տոննա բերքը միջին ցուցանիշ է: Նշենք, որ երկրի բնակլիմայական պայմանները պարզապես նպաստավոր չեն եգիպտացորենի մշակման համար: ՀՀ-ում գեթ մեկ մասնագետ չէք գտնի, որ կպատասխանի, թե ինչպես են դանիացիները նման արդյունք ապահովում 55 աստիճանից վերեւ գտնվող իրենց տարածքներում: Դրա համար թերեւս մասնագիտական մոտեցում է պետք, որը ՀՀ-ում փոխարինվում է «հայ գյուղացուն ոչինչ սովորեցնել պետք չէ, նա յուրաքանչյուր մասնագետից շատ ավելին գիտի» ինքնաարդարացմամբ: ՀՀ բյուջեի հաշվին պահվող մասնագիտական կառույցը նվազագույն առնչություն ունի գյուղում ծավալվող իրադարձություններին, քանզի երկրով մեկ մշակվող հացահատիկային մշակաբույսերի 1 հա-ի միջին բերքատվությունը տատանվում է 2-2,5 տ-ի միջեւ: Պատճառաբանություններ ինչքան ուզեք, գյուղքաղաքականությունը վերանայելու նախաձեռնություն՝ ոչ մի դեպքում:

Հարցը, թե ինչքանով է իրատեսական 600 հզ. տոննա ցորենի պարագայում ՀՀ պարենային ապահովությունը ինքնաբավ համարել, ինչում է ինքնաբերաբար: Չէ՞ որ երբ 2007-ին արձանագրվեց 453 հզ. տոննա հացահատիկի արտադրություն, որեւէ մեկի մտքով չանցավ հացով մեր ապահովվածությունը հասցնել 75 տոկոսի, քանզի նման հայտարարությունը նվազագույնը տարակուսանք կառաջացներ: ՀՀ-ի համար ահռելի հռչակվող այս ծավալի կողքին այդ տարում երկիրը 375 հզ. տոննա ցորենի, 13 հզ. տոննա ալյուրի, 11 հզ. տոննա հացաբույսերից մթերքների ու մակարոնեղենի ներմուծում է իրականացրել: Ստացվում է՝ պետք է հավատալ ՀՀ ԱՎԾ-ի այն հաղորդագրությանը, ըստ որի ՀՀ 1 բնակչի հաշվով հացամթերքի օրական փաստացի սպառումը կազմում է 490 գրամ: Այս թվերի արդյունքում ՀՀ բնակչության տարեկան սպառումն անցնում է 500 հզ. տոննայից, որին դժվար է համակերպվել հենց թեկուզ այն պատճառով, որ նույն ԱՎԾ-ն վերջին տարիներից յուրաքանչյուրում ՀՀ-ում սպառվող հացամթերքի քանակը ցույց է տալիս 300 հզ. տոննայի սահմանում: ՀՀ գյուղնախարարությունը իր ռազմավարական փաստաթղթերից մեկում նշում է. ոչ պաշտոնական տվյալներով հանրապետությունում օրական թխվում է մոտ 500 տ հաց: Տարեկան ստացվում է 180 հզ. տոննա:

Այս խառնաշփոթը լավագույն ցանկության դեպքում անգամ հնարավոր չէ լուծել, քանզի տեսնում ենք, որ ոչ միայն պարզություն չկա ՀՀ բնակչության կողմից հացամթերքների սպառման հարցում, այլեւ պարզ չէ, թե ցորենի ինչ քանակ է օգտագործվում օղու թորման նպատակով, ինչ ծավալ է կազմում լավաշը, եւ ինչքան է անասնակերի նպատակով ծախսվողը: Վերջինը գյուղոլորտում արդյունքների հասած երկրները փոխարինում են առավել արդյունավետ եգիպտացորենի հատիկի օգտագործմամբ, որը ՀՀ-ում գրեթե բացակայում է: Եթե ցորենի համաշխարհային արտադրությունը 2000-2007 թթ. 586 մլն տոննայից հասել է 607 մլն տոննայի, ապա եգիպտացորենի հատիկը համապատասխանաբար 592 եւ 822 մլն տոննա է կազմել: Հանրահայտ «կուկուռուզի հատիկը» արդեն մեկ տասնամյակ երկիր մոլորակի թիվ 1 մշակաբույսն է դարձել, որը մեզանում չեն տեսնում ու ընդունում: Ցորենի համեմատ ցանքի աննշան, իսկ բերքատվությամբ զգալիորեն գերազանցող այս մշակաբույսը ահռելի քանակներով աճեցնում են ԱՄՆ-ում ու Չինաստանում, Եվրոպայում ու Աֆրիկայի հարավում, Բրազիլիայում ու Օվկիանիայում. այն անասնակերում օգտագործելը երաշխավորում է անասունի բարձր մթերատվություն, արդյունավետ կաթնամսաարտադրություն, դրանց մատչելիություն բնակչությանը, որն իր հերթին նվազեցնում է հացամթերքների օգտագործումը: ՀՀ-ի պարագայում ունենք 100 միլիոնավոր դոլարների հասնող մսամթերքների, պատրաստի սննդի արտադրանքի, կաթի փոշու ու պանրի, հատիկաընդեղենի ու մակարոնի, վարունգի ու խաղողի, սոխ-սխտորի ու անգամ գազարի ներկրումներ. ցորենի պետական գնման մասին ընդհանրապես չի խոսվում, որը զգալի օգնություն կլիներ գյուղացուն, թե՛ բերքի երաշխավորված իրացման, թե՛ գնի հարցում. տխուր ու մտահոգիչ է, եթե այլ խոսքեր չօգտագործվեն: Ի դեպ, օրերս ՌԴ-ն արգելեց բրազիլական մսի ներմուծումը ինչ-ինչ պայմաններ չբավարարելու արդյունքում. արդյոք հայաստանցիներս առավել դիմացկո՞ւն ենք այդ պայմանների հանդեպ:

Ի՞նչ է անհրաժեշտ այս վիճակը շտկելու համար: Թերեւս ՀՀ բարձրագույն ղեկավարության երկրի գյուղքաղաքականությունը կանոնակարգելու վճռականություն, որն առայժմ փոխարինվում է հերթական նախարարի ոլորտի հանդեպ պատկերացումներով ու հայերիս հիմնախնդիրը կիսամիջոցներով լուծելու արդեն բազմիցս հաստատված անհեռանկարային փորձարկումներով:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ
2006-2008թթ ՀՀ գյուղնախարարի
խորհրդական

### ԿԱՐԾԻՔ

# Օտարալեզու դպրոցների մասին

**Վերջերս Ազգային ժողովը առաջին ընթերցմամբ ընդունեց օտարալեզու դպրոցների մասին օրենքը: Այն նպատակ ունի փակել 10-15 հայկական դպրոցներ եւ նրանց փոխարեն բացել օտարալեզու դպրոցներ: 406 թ. ստեղծվել են հայկական տառերը: Այդ ժամանակ ավելի ազդեցիկ էին լատիներենը, հունարենը, պարսկերենը քան այսօր անգլերենը կամ ռուսերենը: Ի՞նչ, ուրեմն սխա՞լ է արել Մեսրոպ Մաշտոցը:**

**Օտարալեզու դպրոցների մասին օրենքի ընդունմամբ սկիզբ է դրվում ուսուցման լեզուն աստիճանաբար փոխելու մի ծրագրի: Պետական լեզուն հիմնվում է ուսուցման լեզվի վրա եւ նրա ածանցյալն է: Հայոց լեզվի եւ հայ գրականության նկատմամբ վերաբերմունքը կառավարության կողմից փոխվել է: Հեռուստաեթերներից վերացել են հայ գրականության եւ հայ գրողների մասին հաղորդումները (օրինակ՝ Հ1): Աղավաղվում է եթերից հնչող հայերենը, եւ պետական պատկան մարմինները, այդ թվում եւ գիտության կրթության նախարարությունը, ոչինչ չեն անում: Այսպիսով փորձ է արվում արժեզրկելու հայոց լեզուն հեռուստադիտողի աչքին, եւ առաջարկվում է փոխել կրթության լեզուն:**

**Հանրապետությունում արդեն կան քառասուն ռուսական դպրոցներ (այդ մասին ասաց արտաքին գործերի նախարարը), ըստ կարգի այդ դպրոցներ կարող են ընդունվել ազգությամբ ռուս կամ Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) քաղաքացիների երեխաները: Բոլոր երկրները ձգտում են ինտեգրել իրենց լեզվական միջավայրում երկրում բնակվող այլազգի քաղաքացիներին, իսկ մեզ մոտ ընդհակառակը՝ փորձում են օտարել հայ երեխաներին: Սա ցույց է տալիս, որ ՀՀ կառավարությանը օտարալեզու դպրոցների մասին օրենքի ընդունումից շատ առաջ արդեն այդ օրենքը կիրառել է:**

**Մի կողմից կառուցում ենք Մատենադարանի նոր շենք, իսկ մյուս կողմից երեխային ուղարկում ենք օտարալեզու դպրոցներ:**

**Ոչ մի երաշխիք չկա, որ վաղը կամ մյուս օրը կառավարությունը մի նոր օրենք չի բերի 100 կամ 1000 օտարալեզու դպրոցների մասին, եւ այդպիսի օրենքն էլ այսօրվա Ազգային ժողովը կընդունի: Չէ՞ որ նախագահ Ս. Սարգսյանի նախընտրական ծրագրերում ոչ մի խոսք չկար օտարալեզու դպրոցների մասին, իսկ այսօր «սխալ են հանում» հայկական դպրոցը:**

**Լեզուն ազգի գոյության հիմքն է, եւ ոչ մի կառավարություն չի կարող այն թեկուզ աստիճանաբար փոխել:**

ՀՐԱՀԱՏ ՍԱՀԱԿՅԱՆ
Ինժեներ

# 27 տարվա կտակը չեղյալ համարեցին, ստորագրությունը՝ կեղծ

*Եղբայրների միջեւ վեճը՝ դատավորների շահադիտության առարկա՞*

**Հանրապետության նրբանցքի թ. 17 բնակարանի հայրական տան բակի մեկհարկանի երկու տարբեր բնակարաններում 27 տարի ապրել են Ռուդոլֆ եւ Էդիկ Դաբաղյանները: Տան փոքր զավակ Ռուդոլֆ Դաբաղյանի հետ ապրում էին նաեւ ծնողները: 1983-ին ընտանիքի հայրը՝ Օնիկ Դաբաղյանը մահացավ՝ տունը կտակելով կրտսեր որդուն: Հոր մահից հետո Երեւանի առաջին նոտարական գրասենյակը Ռուդոլֆ Դաբաղյանին հանձնեց կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը, կադաստրն էլ՝ տան հատակագիծը:**

**«27 տարի միասին ապրել ենք հաշտ ու համերաշխ, ոչ մեկի մտքով մի անգամ չանցավ, որ սա իմ տունը չէ, որ մեր հոր ստորագրությունը կեղծ է», «Ազգի» զրույցում պատմում է Ռուդոլֆ Դաբաղյանը: Երկու եղբայրների համերաշխությունը կշարունակվեր, եթե հանգամանքները չփոխվեին, բնակարանը չդառնար իրացման գոտի եւ արժեք չներկայացներ: Այդ ժամանակ արդեն 70-ամյա Ռուդոլֆ Դաբաղյանի եղբայրն ու քույրը հայտարարեցին, որ կտակի ստորագրությունը կեղծ է, եւ բնակարանից իրենց բաժինն են պահանջում:**

**2002-ին Էդիկ Դաբաղյանի ընտանիքը դիմում է դատարան՝ պահանջելով սահմանել երկու եղբայրների բնակտարածության օգտագործման կարգը եւ թույլատրել առանձնացնել բնակարանների մուտքերը: Էդիկ Դաբաղյանն իր պահանջը հիմնավորել էր հավելելով, որ տարածքը ընտանիքի անդամներին չի բավարարում: Սակայն դատարանը հաշվի առավ, որ հայրը հողամասը կտակել է Ռուդոլֆ Դաբաղյանին, եւ մերժեց պահանջը: 3 տարի անց Էդիկ Դաբաղյանը կրկին դիմեց դատարան՝ այս անգամ եղբոր կտակն անվավեր ճանաչելու պահանջով: Նա դատարանին հայտարարեց, որ հոր կտակի ստորագրությունը կեղծված է: Քանի որ կեղծ ստորագրությունը փաստող ապացույցներ չկային, նախագահող դատավոր Ս. Արամյանը հայցը մերժեց: Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր Դ. Խաչատրյանն էլ որոշում կայացրեց դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ: «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետը եզրակացության մեջ շեշտում է, որ ստորագրությունը պատկանում է Օնիկ Դաբաղյանին: Դատավոր Դ. Խաչատրյանը հայցը թողնում է առանց քննության՝ հաշվի առնելով, որ ստորագրությունը կեղծ չէ:**

**Սակայն մի քանի ամիս անց նույն դատավորը վերաքննության կարգով նոր դատաքննություն նշանակեց, եւ այս անգամ գործն ընթացավ հակառակ ուղղությամբ: Ռուդոլֆ Դաբաղյանի խոսքերով անցկացվեց 3 ձեռագրագիտական փորձաքննություն: Արդյունքում՝ միմյանց հակասող 3 եզրակացություն: 2006-ին «ՀՀ փորձագիտական կենտրոնի» եզրակացության մեջ նշվում է, որ ստորագրությունը հավանաբար պատկանում է Օնիկ Դաբաղյանին, սակայն փորձաքննությանը չի հաջողվել բացարձակ հետեւություն կատարել, 2007-ին «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի եզրակացությամբ՝ «ստորագրությունը հավանաբար չի կատարվել Օնիկ Դաբաղյանի» կողմից: Երեւանի դատական փորձաքննությունների ինստիտուտ «ԴԻԷՔՍ» արտադրական կոոպերատիվի եզրակացության համաձայն՝ ստորագրությունը Օ. Դաբաղյանինը չէ: Այս երեք հակասական եզրակացություններից (հիշեցնենք, որ կտակը 27 տարվա պատմություն ունի-Հ. Հ.) հիմք ընդունվեց վերջինն, ու ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչվեց:**

**Անօրինականությունների շղթան սկիզբ առավ դատավոր Դանիել Խաչատրյանից: «Դատից հետո մոտեցա, ասացի՝ էս ի՞նչ արեցիք, դուք զրկեցիք ինձ հորս ժառանգությունից: Ասաց՝ ինչո՞ւ շուտ չեկաք ինձ մոտ: Ամաչեցի: Ախր գայի ի՞նչ ասեի, առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել, որ կտակս արդար է, գայի ասեի՝ կտակս կե՞ղծ է, անամոթաբար ասաց՝ դուք շուտ գայիք, ձեռքը թափ տվեց ու փախավ», պատմում է Ռուդոլֆ Դաբաղյանը:**

**Դեպքից 7 ամիս անց Ռուդոլֆ Դաբաղյանը փաստաբանի խորհրդով դիմում է արդարադատության նախարարության փորձագիտական կենտրոն: Ձեռագրագիտական փորձաքննությամբ եզրակացության մեջ նշվում է. «Ստորագրությունները կտակում եւ նոտարական սեղանամատյանում կատեգորիկ կատարել է Օնիկ Դաբաղյանը»:**

**2008-ին Ռ. Դաբաղյանը կրկին դիմում է դատարան՝ պահանջելով նոր երեւան եկած հանգամանքի պատճառով վերանայել վճիռը: Առաջին ատյանում նախագահող դատավորը վերաքննում է հանգամանքները, դատարան հրավիրում փորձագետին ու փորձագետի դրական պատասխանից հետո բողոքը մերժում: Ռուդոլֆ Դաբաղյանը զրուցում է նաեւ Վերաքննիչ դատարանի դատավոր Նոյեմ Հովսեփյանի հետ: Վերջինս պատասխանում է, որ չի կարող իր վերադասների վճիռը չեղյալ համարել: Դաբաղյանը հանդիպում է Վերաքննիչ դատարանի նախկին նախագահ Հովհաննես Մանուկյանի հետ, որը խորհուրդ է տալիս նորից դիմել դատարան, սակայն իրերի բերումով հաջորդ օրը Մանուկյանը հրաժարական է ներկայացնում:**

**Այժմ Օնիկ Դաբաղյանի ընտանիքը դիմել է առաջին ատյան, որպեսզի ԴԱՀԿ ծառայությունը գա եւ Ռուդոլֆ Դաբաղյանին եւ նրա ընտանիքին դուրս հանի տանից, սակայն դատարանը մերժել է:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Իսրայելը թող հասկանա, որ կորցնում է տարածաշրջանային ամենամերձավոր բարեկամներից մեկին»

## Հայտարարել է ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանը

ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան **Նամըք Թանը** «Թուրք-ամերիկյան ռազմավարական գործակցություն. անցյալը, ներկան եւ ապագան» թեմայով ելույթ է ունեցել ամերիկյան վերլուծական կենտրոններից Փոթոմաք ինստիտուտում, ընդգծելով, որ Թուրքիան ժողովրդավարության եւ կայունության միջնաբերդ է տարածաշրջանում: Նա միաժամանակ անդրադարձել է այն կարեւոր դերին, որը Իրանի, Իրաքի հարցերում, արաբ-իսրայելական հակամարտությունում, ինչպես նաեւ Կովկասում, Բոսնիայում եւ Կիպրոսում, ըստ դեսպանի, կատարում է Թուրքիան:

Թանը ներկաներին հիշեցրել է նաեւ հարեւանների առկա խնդիրները «զրոյական մակարդակի» իջեցնելու Թուրքիայի դիրքորոշման մասին եւ դժգոհել Իսրայելից: Ինչպես հայտնի է, դեռեւս մայիսի 31-ին իսրայելական հատուկ ջոկատը, հարձակում գործելով Գազա մարդասիրական օգնություն տանող «Ազատության նավատորմիղի» վրա, թուրքական «Մավի Մարմարա» նավի տախտակամածում սպանել էր երկաթե ձողերով եւ կացիններով զինված 9 թուրք «հումանիստների», որոնց հատուկ ջոկատայիններին ցուցադրած դիմադրությունը կարող էր նույնիսկ շարժել միջազգային ահաբեկիչների նախանձը:

Հարձակմանն ի պատասխան հունիսի 16-ին Թուրքիան վերջնագիր էր ներկայացրել, պահանջելով, որ Իսրայելը պաշտոնապես ներողություն խնդրի, փոխհատուցում վճարի եւ անհապաղ վերադարձնի առգրաված նավը: Պահանջների կատարման համար մեկ ամիս ժամկետ էր տրված: Թուրքական վերջնագրից ավելի քան 3,5 ամիս է անցել: Իսրայելն անգամ «Մավի Մարմարա» նավը չի վերադարձնում:

«**Ազգը**» դեռեւս հուլիսի 10-ի համարում գրել էր, որ Իսրայելն ի սկզբանե գերզգայուն է եղել զիջումների հանդեպ, կատարել Թուրքիայի պահանջները՝ կնշանակի նախադրյալներ ստեղծել այլոց նոր պահանջների համար: Այլ կերպ, թուրքական պահանջներն արժանանալով արհամարհանքի, ընդամենը հանգեցրել են Թուրքիա-Իսրայել լարվածության հետագա սրմանը:

Դեսպան Թանի դժգոհությունը պայմանավորված է թուրքական պահանջների հանդեպ Իսրայելի արհամարհական վերաբերմունքով, ինչպես նաեւ թուրք-իսրայելական լարվածությունից բխող Վաշինգտոնի անհանգստությամբ:

Թերեւս պատահական չէ, որ ելույթում դեսպանը ուշադրություն է հրավիրել խաղաղ պայմաններում մեկ այլ պետության Թուրքիայի քաղաքացիներին սպանելու «աննախադեպ» փաստի վրա եւ ասել է. «Ավելի քան վատ է, երբ հարձակումը բարեկամն է իրականացնում: Չեք պատկերացնի, թե որքան շփոթվեցի, ստանալով հարձակման լուրը»: Թանը խոսել է նաեւ Իսրայելից ակնկալվող ներողության եւ փոխհատուցման մասին ու շարունակել. «Եթե Իսրայելը չհասկանա, որ տարածաշրջանում կորցնում է ամենամերձավոր բարեկամներից մեկին եւ համապատասխան վերաբերմունք չցուցաբերի, ապա անհնար է լինելու մեր հարաբերություններում նախկին մակարդակի վերականգնումը: Եթե բարեկամությունն անկեղծ է, ապա բարեկամները միմյանց պարտավոր են ճշմարտությունն ասել: Ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ, թե ինչու իսրայելական կողմը մի մեծ խնդիր է սարքել ներողություն խնդրելը: Մինչդեռ հենց դա պետք է արվեր: Եթե Իսրայելն ընդուներ իր սխալը, հարցերն անհամեմատ հեշտ կլուծվեին»:

Վերջում ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Թանը ընդգծել է, որ հարաբերությունների կարգավորման առումով առաջին քայլը պետք է կատարի իսրայելական կողմը, ներողություն խնդրելով ոչ ոք չի նսեմանում, եւ իրենք այդ քայլի առումով շարունակելու են համոզել Իսրայելին: Նա միաժամանակ ավելացրել է. «Եթե Իսրայելը ներողություն խնդրի, ապա այս միջադեպը այլեւս որպես «սեւ բիծ» չի մթագնի մեր երկու երկրների հարաբերությունները»:

Թանի խոսքերը հազիվ թե ի զորու լինեն համոզելու Իսրայելին, որ Թուրքիայից ներողություն խնդրի: Այդ մասին անկասկած քաջատեղյակ է նաեւ ինքը՝ Թուրքիայի դեսպանը: Ամենայն հավանականությամբ նրա խնդիրը ոչ այնքան Իսրայելի ներողությունն է, որքան ներողության Թուրքիայի ակնկալիքի հիշատակումը, որպեսզի թուրք-իսրայելական լարվածության եւ Վաշինգտոնի՝ այդ լարվածությունից բխող անհանգստության համար պատասխանատվությունը ընկնի իսրայելական, այլ ոչ թե թուրքական կողմի վրա:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Բողոքականները սպառնալի՞ք են, թե՞ սպառնալիքների թիրախ Թուրքիայում

Քեմալ Աթաթուրքի ժամանակակից Թուրքիան իբրեւ ազգային պետություն ստեղծվել է այլ ժողովուրդների պատմական հայրենիքի տարածքում: Թեեւ 1915-23 թթ. հայերի հետ ցեղասպանության են ենթարկվել Պոնտոսի հույները, իսկ մնացածները փոխանակվել են Բալկաններում բնակվող մահմեդականների հետ, եւ քեմալականները էթնիկ եւ կրոնական խմբավորումների հետ նորաստեղծ թուրքական պետության հարաբերությունները կարգավորել են Հայկական հարցը հայերին բնաջնջելու միջոցով լուծելու իթթիհադական սկզբունքով, բայց ապարդյուն:

Հակառակ Քեմալ Աթաթուրքի «Երանի նրան, ով իրեն թուրք է համարում» հանրահայտ ասույթին, Թուրքիայում հանրապետական կարգերի հաստատման առաջին իսկ օրից ապստամբել են ներկայումս երկրի բնակչության 1/4-ը կազմող քրդերը, իսկ ալավիները, որոնք ավելի քան 15 միլիոն են, ըմբոստացել են սահմանադրական իրավունքների ոտնահարման դրսեւորումների դեմ: Այդ ընթացքում հետզհետե ինքնագիտակցություն են ձեռք բերել լազերը, չերքեզները եւ այլ խմբավորումներ:

Վերջիններս բազմաթիվ ազգային միություններ են ստեղծել ինչպես Թուրքիայում, այնպես էլ եվրոպական այն երկրներում, որտեղ կան Թուրքիայի քաղաքացիներ: Հետզհետե նրանց են միանում նույնիսկ իսլամացած եւ մահմեդականացման միջոցով սիրահոժար թուրքացման ուղին բռնած մի քանի տասնյակ հազար վրացիներ: Այսպիսով, կատարելապես ձախողվել է բազմազգ երկրում ի սկզբանե դատապարտված միատարր «թուրք ազգ» կերտելու քեմալական ծրագիրը:

Ըստ երեւույթին այդ ծրագիրը իրականացման առումով մեծ հույսեր չէր ներշնչում թուրքական իշխանություններին, որ նրանք ազգային հայ, հույն, հրեա փոքրամասնությունների հետ հաշվեհարդարի են ենթարկել էթնիկ եւ կրոնական խմբավորումներին: Դա ընդամենը հանգեցրել է վերջիններիս ազգային ինքնագիտակցության ամրապնդմանն ու դավանանքի հողի վրա համայնքային ենթագիտակցությամբ թուրքերից տարանջատմանը: Դրանով միատարր «թուրք ազգ կերտելու» ծրագրին զուգընթաց ձախողվեց երկրի ոչ թուրք ժողովուրդներին այդ տարրի մեջ ձուլելու դեռեւս Քեմալ Աթաթուրքի օրոք աշխարհիկ եւ հանրապետական Թուրքիայի որդեգրած ազգայնամոլ քաղաքականությունը:

Ստեղծված իրավիճակում հայ, հույն, հրեա ազգային փոքրամասնությունների դավադրության որոնումների գծով մասնագիտացված թուրքական իշխանությունները, որոնք մինչ այդ վերջիններիս դիտարկում էին Թուրքիայի ազգային շահերի սպառնալիք, սկսեցին քրդերին պետության մասնատման, իսկ ալավիներին՝ թուրք ազգի միասնականության սպառնալիքը համարել:

Որքան էլ 99,9 տոկոսով մահմեդական լինի Թուրքիայի բնակչությունը, վերջին տասնամյակներում քաղաքական որոշ շրջանակներ, հատկապես «Մեծ միասնություն» եւ Ազգային շարժում կուսակցությունների գլխավորությամբ եւ իշխանությունների հավանությամբ, սկսել են խոսել երկրի քրիստոնեացման վտանգի մասին: Այսպիսով, Թուրքիայի ազգային շահերի համար հանկարծ լուրջ սպառնալիք են դարձել երկրում առկա մի բուռ բողոքականներ, որոնց անտանելի կացությունը «Բողոքականները սպառնալի՞ք են, թե՞ սպառնալիքի թիրախ երկրում» վերնագրով զեկուցագրում ամփոփել է Բողոքական եկեղեցիների միությունը:

Հոկտեմբերի 6-ին զեկուցագրին անդրադարձել է քրդական լրատվական գործակալության firatnews.com կայքէջը: Անդրադարձը ուշագրավ է հարցադրումներով եւ լրացնում է Թուրքիայում ազգային փոքրամասնությունների, էթնիկ եւ կրոնական խմբավորումների սահմանադրական իրավունքների ոտնահարման, նրանց նկատմամբ իրականացվող հալածանքների մասին մեր պատկերացումները, ուստի մասնավոր մոտեցում է պահանջում:

Հ. Չ.

ՖՐԱՆՍԻԱ

# Սահմանադրական խորհուրդը հաստատեց փարանջայի արգելումը



**Ֆրանսիայի սահմանադրական խորհուրդը հավանություն է տվել հասարակական վայրերում դեմքը ծածկող հագուստ կրելու արգելքին: Այսպիսով, Ֆրանսիայում մահմեդական կանայք նման վայրերում չպետք է կրեն չադրա, փարանջա եւ նիկաբ:**

**Արգելքն ուժի մեջ կմտնի 2011-ի գարնանը եւ չի գործի կրոնական ծիսակատարությունների վայրերում, որպեսզի չխախտի կրոնական ազատությունը: Սահմանադրական խորհրդի հաստատումը վերջին փուլն էր օրինագծի կիրարկումից առաջ:**

**Օրենքի տեքստում չի խոսվում իսլամի մասին, սակայն արգելքի կողմնակիցները պնդում են, որ դա անհրաժեշտ է հենց կանանց իրավունքները պաշտպանելու համար: Արգելքը նախաձեռնողներից մեկը Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին է:**

**Ֆրանսպրեսը նշում է, որ առաջիկա վեց ամիսներին երկրում կծավալվի տեղեկատվական արշավ, որի ընթացքում կանանց կպատմեն նման արգելքի անհրաժեշտության մասին: Փարանջայի արգելքը խախտողները կտուգանվեն 150 եվրո: Տուգանքը կարող է փոխարինվել քաղաքացիական ազատություններին վերաբերող դասախոսությունների շարքով: Եթե պարզվի, որ տղամարդը կնոջը ստիպում է ծածկել դեմքը, ապա նա կարող է տուգանվել 30 հազար եվրո եւ մեկ տարով բանտարկվել:**

**Տվյալ օրենքի հակառակորդները պնդում են, թե այն խախտում է մարդու իրավունքները եւ հակասում եվրոպական նորմերին:**

# Սարկոզին ուղղումներ կմտցնի կենսաթոշակային բարեփոխման մեջ

**Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին խոստացել է ուղղումներ կատարել պատրաստվող կենսաթոշակային բարեփոխման մեջ, որը բնակչության զայրույթն է հարուցել դրանում նախատեսվող կենսաթոշակային տարիքի բարձրացման կապակցությամբ:**

**Հակասական օրինագիծը «մեղմացնելու» Սարկոզիի մտադրությունը հաստատել է աշխատանքի նախարար Էրիկ Վյորթը: Նրա խոսքերով, արդեն մշակված են ուղղումներ, որոնք նախատեսում են մեղմացումներ բազմազավակ մայրերի եւ սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների ծնողների համար: Այդ անձինք կկարողանան կենսաթոշակի անցնել մյուսներից շուտ: Ֆրանսպրեսը նշում է, որ տվյալ նախաձեռնության իրականացման համար Սարկոզին խոստացել է լրացուցիչ կարգով հատկացնել 3,4 մլրդ եվրո: Այդ գումարը պետք է հայթայթվի նոր հարկերի հաշվին:**

**Էրիկ Վյորթը կենսաթոշակային բարեփոխման օրինագծի ուղղումներն արդեն ուղարկել է խորհրդարանի վերին պալատ՝ Սենատ:**

**Սարկոզին կենսաթոշակային բարեփոխման իր օրինագծում ստիպված է մեղմացումներ կատարել Ֆրանսիայում մեկ ամսից ավելի շարունակվող բողոքի զանգվածային ելույթների պատճառով: Միայն հոկտեմբերի 7-ին երկրում գործադուլներին ու ցույցերին մասնակցել է մոտ 3 մլն մարդ: Օրինագծով մասնավորապես նախատեսվում է կենսաթոշակի անցնելու տարիքը ներկայիս 60-ից բարձրացնել 62-ի: Ընդդիմադիր գործիչներից շատերը դատապարտում են այդ օրինագիծը: Մասնավորապես սոցիալիստների առաջնորդ Մարտին Օբրին օրերս RFI ռադիոկայանի եթերում հայտարարեց, որ նման կարեւոր հարցերը պետք է դրվեն համաժողովրդական քննարկման, ինչպես արվել է Գերմանիայում եւ եվրոպական մի շարք այլ երկրներում:**

**Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատը՝ Ազգային ժողովը, արդեն հավանություն է տվել օրինագծին: Ներկայումս փաստաթուղթը քննարկվում է Սենատում, որը ստիպված կլինի հաշվի առնել Սարկոզիի ուղղումները:**

# Իսրայելը ԱՄՆ-ից նորագույն կործանիչներ կստանա շինարարությունը սառեցնելու դիմաց

**Իսրայելի կառավարությունը ԱՄՆ-ի հետ պայմանագիր է ստորագրել հինգերորդ սերնդի F-35i կործանիչների գնման վերաբերյալ: Խոսքը 20 նորագույն ռազմօդանավերի մասին է: Գործարքի գումարը 2,74 մլրդ դոլար է, ըստ որում դրա մեծ մասը ամերիկացիներին կփոխանցվի ԱՄՆ-ի հատկացրած ռազմական դրամաշնորհի միջոցներից, իսկ մնացյալը իսրայելցիները կվճարեն 8 տարվա ընթացքում: Այդ մասին հաղորդում է news-ru.Israel կայքը, վկայակոչելով «Ռեշետ Բեթ» ռադիոկայանի տվյալները:**



**Մատակարարումները կիրականացվեն 2015-2017 թթ.: Համաձայնագրով հնարավոր է համարվում ընդլայնել պատվերը եւ հասցնել 75 ռազմօդանավի:**

**Հիշյալ կայքը նշում է, որ գործարքը Վաշինգտոնի «խրախուսանքն» է Իսրայելին, որպեսզի վերջինս տա մի շարք երաշխիքներ, մասնավորապես զիջումներ անի պաղեստինցիներին եւ երկարաձգի հրեական ավանների շինարարության սառեցումը Հուդայում եւ Սամարիայում, այսինքն՝ Այսրհորդանանում:**

**Ռազմօդանավերի նորացումը տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը կփոխի հօգուտ Իսրայելի եւ էապես կմեծացնի իսրայելական բանակի զսպիչ ներուժը: Օդանավերից բացի Իսրայելը պետք է ստանա լրացուցիչ ռազմական օգնություն, ներառյալ հակահրթիռային պաշտպանության համակարգերը եւ վաղ նախազգուշացման արբանյակային համակարգերից օգտվելու հնարավորությունը:**

# 90-ամյա կոմպոզիտորն ու երիտասարդ դիրիժորը

Այս օրերին Հայաստանի կառավարությունը եւ երաժշտական հանրությունը լայնորեն նշում են ականավոր կոմպոզիտոր, մեծանուն արվեստագետ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ալեքսանդր Հարությունյանի ծննդյան 90-ամյակը: Հաղորդումներ, տեսաֆիլմեր, հարցազրույցներ, կոմպոզիտորի տարբեր ժանրի ստեղծագործությունները ներկայացնող համերգներ, որոնք մեկ անգամ եւս հաստատում են ստեղծագործական բեղուն ու արգասավոր ճանապարհ անցած բազմատաղանդ մարդու քանքարի հզոր ուժը: Ալեքսանդր Հարությունյանի երաժշտությունը մի ամբողջ դարաշրջանի հնչյունային տարեգրությունն է: Դարաշրջան, որ լի էր ծայրահեղ հակասություններով. մարդկային վեհ ձգտումներով, հավատով, պարտավորություններով, նաեւ հակամարդկային փորձարկումներով, կատակլիզմներով, տոտալ գաղափարախոսության գերիշխանությամբ: Եվ այս հակասությունների միջով մի մեծ երկրում եւ, մասնավորապես, մեր ազգային երաժշտության պատմության մեջ արձանագրվեց բարձրագնա արվեստի ծաղկուն մի շրջան, որի հոգեւոր լիդերներից էր Ալեքսանդր Հարությունյանը:

Բազմաժանր, բազմաբնույթ, վառ ինքնատիպությամբ օժտված իր երաժշտությամբ կոմպոզիտորը հայ եւ օտարազգի բազմահազար ունկնդիրներին հասցնում է իր ապրած ժամանակաշրջանի թե՛ հասարակական, թե՛ երաժշտական շնչառությունը, դարերից եկող եւ իր հարուստ ներաշխարհի խառնարանում հարստացած, բյուրեղացած ազգային մեղեդայնության հուզական թրթիռները, ռիթմային կենսալիությունը, ներքին դինամիկայի ուժն ու հզորությունը:

Այս օրերի Հարությունյանի երաժշտության առինքնող բացահայտումներից եղավ Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի համերգը, որ տեղի ունեցավ Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում, սեպտեմբերի 23-ին, կոմպոզիտորի ծննդյան օրը: Շեփորի եւ նվագախմբի համար հեղինակած թեմա վարիացիաներով (1973) երկի, սիմֆոնիայի (1956) եւ Տոնական նախերգանքի (1949) գեղարվեստական, երաժշտաոճական ողջ հմայքը դահլիճում թեւածեց նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր, տաղանդաշատ երաժիշտ Սերգեյ Սմբատյանի մեկնությամբ: Սա այդ օրվա համերգի կարեւոր խորհուրդներից էր. 90-ամյա կոմպոզիտորի ստեղծագործությունները հնչեցնում էր 23-ամյա (ի դեպ այդ օրը նաեւ դիրիժորի ծննդյան օրն էր) երիտասարդ դիրիժորը:

Տարբեր են կոմպոզիտորի եւ երիտասարդ դիրիժորի ժամանակային, հոգեբանական ընկալումները, ըմբռնումները, տարբեր ինքնաճանաչման եւ աշխարհաճանաչման գործոնները, բայց եւ արվեստում կա մի կարեւորագույն գործոն. մեկնաբանվող ստեղծագործության գեղարվեստական, գեղագիտական արժանիքները: իսկ Ալեքսանդր Հարությունյանի երաժշտությունը իր ոճական ու գեղարվեստական բարձր արժանիքներով վաղուց արդեն ստացել է դասական, ասել կուզե գեղարվեստական կատարելության ներկայացնող արվեստ: Կոմպոզիտորի երաժշտության այս բարձր գիտակցումով Սերգեյ Սմբատյանն իրագործեց նրա հեղինակային համերգը:



1973 թվականին շեփորի եւ նվագախմբի համար հեղինակած թեմա վարիացիաներով կոնցերտը Սմբատյանի ղեկավարությամբ հնչեց շեփորի ձայնածավալի այն հարստությամբ եւ գունային հնարներով, որ ստեղծել էր հեղինակը: Կոնցերտային այս ժանրի բարձրարժեք ստեղծագործությունը, որտեղ հրաշալի է օգտագործված շեփորի արտահայտչական հնարավորությունները արդեն կար կոմպոզիտորի ստեղծագործությունում: Դա 1950 թվականին ստեղծված նրա շեփորի եւ նվագախմբի համար կոնցերտն է, որն այսօր աշխարհում ամենահաճախ հնչող հայկական երաժշտական ստեղծագործություններից է: Եվ, ընդհանրապես Ալեքսանդր Հարությունյանը ամենաշատ հնչող հայ կոմպոզիտորներից է: Տաղանդավոր շեփորահար Սերգեյ Գուրյեւի հետ դիրիժորն ստեղծեց անսամբլային միասնություն, որում պարտիտուրի երգային ու դինամիկ, քնարական ու դրամատիկ մեղեդային հյուսվածքը հնչեց գունային իր ողջ լուսապատկերով, հարմոնիկ լեզվի կոմպոզիտորական նոր հայտնություններով, ֆունկցիոնալ նոր բարդություններով ու լարվածությամբ: Կարծում եմ սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ շեփորի համար գրված այս երկրորդ կոնցերտը համերգային այս կատարմամբ նորովի բացահայտեց ստեղծագործության առինքնող վարպետությունը:

Երկրորդ ստեղծագործությունը, որ հնչեցրեց երիտասարդական նվագախումբը Ալեքսանդր Հարությունյանի նշանավոր սիմֆոնիան էր, որը ստեղծման առաջին իսկ օրերից հիացրել էր իր մասշտաբայնությամբ, հուզական ուժով, ներաշխարհի հոգեբանական բախումներով: Սա, իհարկե, սիմֆոնիկ երկ է, բառի լայն իմաստով: Երիտասարդ դիրիժորին հաջողվեց վեր հանել պարտիտուրի իմաստային ու գունային ընդգրկումները, հնչեցնել լայնախոհ սիմֆոնիզմը: Ալեքսանդր Հարությունյանը ձեւակառուցման անզուգական վարպետ է: Սիմֆոնիան աչքի է ընկնում կուռ ձեւակառուցմամբ, որը տրամադրությունների եւ հոգեվիճակների իր ամբողջականությամբ ստեղծում է դրամատուրգիական այն հարաճուն ընթացքը, որն ի հայտ է բերում գեղարվեստականության ողջ ուժը: Այն հայ սիմֆոնիկ երաժշտության բարդ երկերից է: Երիտասարդ դիրիժորը լավագույնս հաղթահարեց պարտիտուրի բարդությունը: Երաժշտականորեն ճիշտ բաշխելով զարգացման դինամիկան, հստակորեն զգալով յուրաքանչյուր մասի տեղը շարժման ընթացքում, դիրիժորը տրամաբանորեն համոզեցուցիչ հասավ ֆինալին: Նրան հաջողվեց ունկնդրին փոխանցել ստեղծագործության զգացմունքային բովանդակությունը. հայրենիք, երկիր, բախումներ, անցյալ, հավատ:

Համերգն ավարտվեց 1949 թվականին ստեղծած հանրահայտ «Տոնական նախերգանք»-ով, որը այդ ժամանակ երաժշտական պահանջվող ժանրային տեսակներից էր: Բայց հարությունյանական մեղեդային հմայքով, դասական պարզությամբ հյուսված ընդհանրական բնույթի տոնականությունը, այսօր էլ կենսալիության ուժ եւ դրական լիցք է հաղորդում ունկնդրին: Երիտասարդ դիրիժորը այս ամենին է հաղորդել մեր օրերի դինամիկայի շնչառությունը: Ճիշտ ընտրված ծրագիրը հոգեւոր լիցք հաղորդեց դահլիճին:

90-ամյա կոմպոզիտորի եւ երիտասարդական նվագախմբի ու նրա դիրիժորի ստեղծագործական համագործակցությունը այս օրերի երաժշտական կյանքի նշանակալից իրադարձություններից էր:

ԱՐԱՔՍԻ ՍԱՐՅԱՆ

# Պրիմաբալերինային ազատել են մերկ լուսանկարների համար

**Այն, որ Վիեննայի Շտատսօպերի մենապարուհի Կարինա Սարկիսովան օգոստոսի 23-ին ազատվել է աշխատանքից հենց մերկ լուսանկարվելու պատճառով, հաստատվել է. հոկտեմբերի 7-ին ավստրիական լրատվամիջոցներին թատրոնի տնօրենությունից են վստահեցրել:**

**Շտատսօպերի տնօրեն Դոմինիկ Մայերը հրազեկել է, թե իրեն զայրացրել է այն, որ ամսագրերից մեկում դրանք տպագրվել են Սեքս խորագրի տակ, վերնագրված՝ «Բալետի մերկ պարուհին. այն բալետը, որ մենք ենք սիրում»: Սա թատրոնի պատմության մեջ առաջին դեպքն է:**

**1983-ին Մոսկվայում ծնված Սարկիսովան ի թիվս ուրիշ թատրոնների աշխատել է նաեւ Մեծ թատրոնում, 10 տարի է, ինչ մաս է կազմում Վիեննայի Շտատսօպերին, ինչպես ասում են՝ թատրոնի պրիմաբալերինան է: Պարուհին գանգատվել է, թե թատրոնի տնօրենը իրեն չի էլ ունկնդրել:**

Ան. Հ.
Գերմանիա

ԿԻՆՈԱՇՈՒՆ

# Ազգային կինոյի ամիսը կմեկնարկի հոկտեմբերի 11-ից

**Հայաստանի ազգային կինոկենտրոնի նախաձեռնությամբ, հոկտեմբերի 11-ից կմեկնարկի «Կինոաշուն-ազգային կինոյի ամիս» ծրագիրը, որը միտված է վերականգնելու եւ հաստատելու Հայաստանում արտադրված ֆիլմերի ցուցադրության բարի ավանդույթը, կինոյի տարածման այն խողովակներն ու միջոցները, որոնք անհետացան անցյալ դարի 90-ականների սկզբում: Այդ բացթողումները լրացնելու եւ հանդիսատեսին կրկին կինոսրահ բերելու գործին է միտված Հայաստանի ազգային կինոկենտրոնի նախաձեռնած «Կինոաշուն» ծրագիրը, որը հավակնում է դառնալ ամենամյա: Այդ մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց կենտրոնի տնօրեն Գեւորգ Գեւորգյանը ու ներկայացրեց մեկամսյա միջոցառումների ծրագիրը:**

**Ծրագրի առաջնային նպատակն է ամեն տարի մեկ ամիս մայրաքաղաքում եւ մարզերում իրականացնել ինչպես ազգային կինոֆոնդում պահպանվող ֆիլմերի ցուցադրությունն ու տարածումը, այնպես էլ ժամանակակից հայ կինոարտադրանքի մասսայական տարածումը, հասարակական կարծիքի ձեւավորումը, արդի հայ կինոն հայ հանրության մշակութային կյանքի անբաժանելի մասը դարձնելը: Ազգային կինոամսվա շրջանակներում կցուցադրվեն շուրջ 100 ֆիլմեր, որոնք դասակարգվել են ըստ ժամանակաշրջանների՝ համր կինոյից մինչեւ այսօր, եւ դրանք կցուցադրվեն «Մոսկվա» կինոթատրոնում, Հովհ. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնում, «Առնո Բաբաջանյան» համերգասրահում, Նարեկացի արվեստի կենտրոնում, Կասկադում եւ Սիրահարների այգում:**

**Բացի հայկական հին ու նոր ֆիլմերի ցուցադրություններից կնշվեն հայ կինոյի երախտավորներ՝ Հենրիկ Մալյանի եւ Հենրիկ Մարգարյանի 85, Մհեր Մկրտչյանի եւ Լեւոն Աթոյանի 80, Ալբերտ Յավուրյանի 75, Ռուբեն Գեւորգյանցի 65, Ռոբերտ Սահակյանցի, Սուրեն Բաբայանի եւ Գայանե Մարտիրոսյանի 60-ամյա հոբելյանները, կբացվի կինոյի երախտավորների ֆոտոցուցահանդեսը, կանցկացվեն կլոր-սեղան քննարկումներ: Իսկ լավագույն գրախոսական նյութերի համար կանցկացվի մրցանակաբաշխություն՝ 1-ին տեղ՝ 100.000, 2-րդ՝ 75.000, 3-րդ՝ 50.000 դրամ մրցանակային պարգեւատրում:**

**Նոյեմբերի 2-ին կազմակերպվել է սեմինար, որին կմասնակցեն մասնագետների «Կոդակի» ներկայացուցիչներից մեծ պատվիրակություն: Կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտի պրոռեկտոր Անիտա Երզնկյանը, որը նաեւ հանձնախմբի անդամ է, նշեց, որ ցուցադրություններ ու քննարկումներ կլինեն Կինոյի եւ թատրոնի ինստիտուտում, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում, Գեղարքունիքի, Շիրակի, Կոտայքի եւ Արմավիրի մարզերում: Ծրագրում ընդգրկված են նաեւ մանկական ֆիլմեր ու մուլտեր, որոնք ստեղծվել են «Հայֆիլմ» կինոստուդիայում:**

**«Կինոաշուն» ծրագրի բացման հանդիսավոր արարողությունը կկայանա «Մոսկվա» կինոթատրոնում հոկտեմբերի 11-ին, ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ եւ Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի հովանու ներքո:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Միլանդա դը Մոնս-Գրիգորյանը՝ Գոսֆորդի մրցանակակիր

**Ավստրալական Գոսֆորդ քաղաքի տեղական կառավարման խորհրդի հովանավորությամբ «Շրջանային արվեստի պատկերասրահի» հիմնադրման 10-րդ տարեդարձին նվիրված արվեստների ամենատարբեր (նկարչության, քանդակագործության, լուսանկարչության, տեղակայման, կերամիկական եւ տեսագրման) բնագավառների ցուցահանդես-մրցույթում համընդհանուր մրցանակի (10 հազար դոլար) է արժանացել միջազգային ճանաչում ձեռք բերած հայազգի աբստրակտ նկարչուհի Միլանդա դը Մոնս-Գրիգորյանը: Այս մասին է տեղեկացնում «սրտանց եւ ուրախությամբ» այդ առթիվ հրապարակված հաղորդագրությունը, որ նաեւ տեղեկացնում է, թե Միլանդան բնակվում է Ավստրալիայում (Սիդնեյ) եւ Գերմանիայում եւ այցելել է Երեւան 2004, 2009 եւ 2010 թվականներին:**



«Պայծառ րոպե» արծնապատ կտավ

**«Միլանդայի արծնապատ կտավները բնորոշում են ազատ մտածելու արտիստական արտահայտչամիջոցների նրա գաղափարները: Նրա թափանցիկ վրձնահարվածները արտահայտում են ինքնուրույն կենսունակություն եւ զգացմունքային թրթիռներ: Բնությունից ներշնչվելով, նա կարողանում է ձեռք բերած շարժումներն ու էներգիաները գույների, գծերի եւ ձեւերի միջոցով փոխանցել կտավին եւ նրանում պատկերված թեմային: Նրա ոճը աբստրակտ-էքսպրեսիոնիստական է: Դրանով նա վարպետորեն կարողանում է արտահայտել բնության եւ մարդու միջեւ գոյություն ունեցող կապը: Նրա ստեղծագործությունները տեսողական երկխոսություններ են, որոնք ի մի են բերում աշխարհընկալման նրա դատողությունները» գրված է հաղորդագրության մեջ: Նա նաեւ կատարողական արվեստների՝ պարի եւ երաժշտության բնագավառներում է ընդգրկված:**

**Գոսֆորդի արվեստների մրցանակաբաշխությունը ամենամյա միջոցառում է, որն արդեն մեծ համբավ եւ ժողովրդականություն է վայելում: Գոսֆորդի շրջանային արվեստի պատկերասրահը անցած տասը տարիների ընթացքում կազմակերպել է 230 ցուցահանդեսներ եւ ընդունել 1,5 միլիոն այցելուների:**

**Այս տարվա մրցանակաբաշխությանը ներկայացված են եղել 517 արվեստի գործեր, որոնցից ժյուրիի անդամները՝ Մակքուերի համալսարանի արվեստի պատկերասրահի ավագ կուրատոր Ռոնդա Դեյվիսի գլխավորությամբ, ընտրել են 154 ստեղծագործություններ ցուցադրման համար: Այդ 154 աշխատանքներից համընդհանուր մեկ մրցանակի է արժանացել մեր հայրենակիցը՝ Միլանդան, ով սեպտեմբերի 10-ին պատկերասրահում կազմակերպված պաշտոնական արարողության ժամանակ Գոսֆորդի քաղաքապետից անձամբ կստանա իր 10 հազար դոլարի մրցանակը:**

**Իսկ 154 ավարտական փուլ հասած գործերի ցուցահանդեսը կտեւի մինչեւ նոյեմբերի 21-ը:**

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Արժանի հաղթանակ առաջատարի նկատմամբ

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը վերջապես անդրանիկ հաղթանակը տոնեց Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում՝ 3-1 հաշվով պարտության մատնելով ընտրական 2-րդ խմբի առաջատարներից մեկին՝ Սլովակիայի ընտրանուն: Հաղթանակը ձեռք բերվեց չափազանց դժվարին ու համառ մրցապայքարում, մեր ֆուտբոլիստների վարպետության, կամային հատկանիշների ու կոլեկտիվ ջանքերի շնորհիվ: Արժանի հաղթանակ, որը վկայում է մեր հավաքականի մեծ ներուժի մասին ու հավաս ներշնչում, որ ընտրական այս մրցափուլում մեր ֆուտբոլիստներն ունակ են լուրջ խնդիրներ առաջադրելու մրցակիցներին, պայքարելու բարձր տեղերի համար:


ՖՈՏՈԼՈՒՐ

Ընտրական նախորդ հանդիպման համեմատ Հայաստանի հավաքականի կազմում 3 փոփոխություն էր կատարվել: Արարատ Առաքելյանի, Դավիթ Մանոյանի եւ Էդգար Մալաքյանի փոխարեն խաղում էին Հրայր Մկոյանը, Մարկոսն ու Գեւորգ Ղազարյանը: Մեր ֆուտբոլիստները բավական ակտիվ սկսեցին հանդիպումը՝ փորձելով հնարավորինս շուտ հասնել հաջողության: Առաջին իսկ գրոհը կարող էր հաջողություն բերել մեր հավաքականին, սակայն Հենրիխ Մխիթարյանի ձախ թեւով սլացիկ անցումից ու փոխանցումից հետո խաղընկերները չկարողացան եզրափակել գրոհը:

Ի տարբերություն դաշտի տերերի, հյուրերը շատ զգույշ սկսեցին խաղը՝ ամեն կերպ ձգտելով գցել տեմպը: Նրանց հազվադեպ գրոհներն իրենց մեջ առանձնակի վտանգ չէին ներկայացնում: Իսկ ահա դաշտի տերերը հաճախակի էին դիմում երկար փոխանցումների՝ փորձելով հարվածային դիրք դուրս բերել Յուրա Մովսիսյանին: Ավելի հաճախ մեր ֆուտբոլիստները գրոհում էին աջ թեւով, սակայն ցավոք այդ եզրում գործող Լեւոն Փաչաջյանը ոչ միշտ էր ճիշտ շարունակություն գտնում: Ուստի մարզիչներն ընդմիջումից անմիջապես հետո իրավացիորեն նրան փոխարինեցին:

Գոլային առաջին լուրջ պահը ստեղծվեց 20-րդ րոպեին, երբ հեռահար հարվածով Մարկոսը փորձեց գրավել դարպասը: Իսկ 3 րոպե անց բրազիլացի ֆուտբոլիստը հստակ փոխանցումով դարպասապահի դեմդիմաց հանեց Մովսիսյանին, որը վարպետորեն գրավեց դարպասը: Քիչ անց հետեւեց Մխիթարյանի տուգանային վտանգավոր հարվածը, որը մեծ դժվարությամբ հետ մղեց դարպասապահը:

Ցավոք, գոլից հետո մեր ֆուտբոլիստները մի փոքր թուլացրին ճնշումը, իսկ հյուրերն էլ սկսեցին ակտիվ գործել: Ու հերթական անգամ մեր պաշտպանների անփույթ գործողությունների հետեւանքով Վլադիմիր Վայսին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը:

Բարեբախտաբար, երկրորդ խաղակեսի սկիզբն արդյունավետ ստացվեց մեր հավաքականի համար: Շատ հաջող խաղի մեջ մտած Էդգար Մանուչարյանի աջ թեւով անցումից ու վտանգավոր հարվածից հետո դարպասապահը մի կերպ հետ մղեց գնդակն ու վրա հասած Գեւորգ Ղազարյանը 2-րդ գոլը խփեց: Քիչ անց կարող էր աչքի ընկնել Մանուչարյանը, սակայն նրա գլխի հարվածը բարձր ստացվեց: 72-րդ րոպեին էլ քիչ էր մնացել Մխիթարյանի սլացիկ անցումն ավարտվեր 3-րդ գոլով, սակայն հյուրերը հրաշքով փրկվեցին:

Խաղի վերջին 20 րոպեներին սլովակները բավական մեծ ճնշում գործադրեցին մեր հավաքականի դարպասին: Այդ ժամանակահատվածում մեր ֆուտբոլիստների գործողություններում որոշ լարվածություն կար, որի հետեւանքով երբեմն պաշտպանությունում սխալներ էին թույլ տրվում: Բարեբախտաբար, ամեն ինչ բարեհաջող ավարտվեց մեզ համար, իսկ խաղավերջում Մխիթարյանի վարպետորեն խփած 3-րդ գնդակն ամրապնդեց այնքան սպասված հաղթանակը: Այո, մեր ֆուտբոլիստներն արժանի հաղթանակ տոնեցին եւ արժանի են դրվատանքի:

## Բարձրագույն խմբի մրցավարները ոտակազրկվել են

ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանի եւ բարձրագույն խմբի առաջնության մասնակից ակումբների ղեկավարների հանդիպման ժամանակ աննախադեպ որոշում է կայացվել: ՀՖՖ նախագահը հայտարարել է, որ դժգոհ լինելով մրցավարների գործունեությունից, որոշել է հրաժարվել բարձրագույն խմբի հանդիպումները սպասարկող մրցավարներից ու առաջիկա խաղերը վստահել մանկապատանեկան թիմերի մրցախաղերը վարող մրցավարներին: Նա հույս է հայտնել, որ վերջիններս իրենց կարիերայում առաջընթացի բացառիկ հնարավորությունը կօգտագործեն՝ առավելագույնս անաչառ վարելով խաղերը: Այդ հարցում նախագահն ակնկալում է ակումբների ղեկավարների օգնությունը: ՀՖՖ նախագահը նաեւ առաջարկել է թիմերի ցանկության դեպքում առաջնության կարեւորագույն խաղերի սպասարկումը վստահել արտերկրից հրավիրվելիք մրցավարներին:


ՖՈՏՈԼՈՒՐ

Մրցավարությանը վերաբերող հարցերը կքննարկվեն ֆեդերացիայի գործկոմի առաջիկա նիստում: Նշենք, որ ակումբների ղեկավարները հավանություն են տվել ՀՖՖ նախագահի որոշմանը: Իսկ թե որքանո՞վ դա կնպաստի նորմալ մրցավարությանը, ցույց կտան առաջիկա հանդիպումները: Համենայն դեպս, վերջին շրջանում մրցավարությունից բողոքները շատ էին:

## Վանես Մարտիրոսյանն ընդունել է Պակյաոյի մարտահրավերը

Աշխարհի ուժեղագույն բռնցքամարտիկներից մեկի՝ Մեննի Պակյաոյի մարզիչը 1000 դոլար պարգեւավճար է խոստացել նրան, ով մարզումային մենամարտի ժամանակ նոկաուտի կենթարկի իր սանին: Պակյաոյի հետ մարզվելու հավակնող բռնցքամարտիկների ցանկում են Վանես Մարտիրոսյանը, Ռաշադ Խոլոուեյը, Գլեն Տապիան եւ Ամիր Խանը:

Վանես Մարտիրոսյանն արդեն հայտարարել է, որ պատրաստ է արժանանալ պարգեւավճարի. «Պատրաստ եմ Ֆրեդի Ռոուչի մարտահրավերին: Առաջինը կլինեմ, ով կխոցակի Պակյաոյին: Շատ եմ հարգում Մեննիին եւ շատ բան եմ նրանից սովորել: Նա հիանալի բռնցքամարտիկ է, սակայն պատրաստ եմ նրա հետ մենամարտին: Ցանկանում եմ ապացուցել, թե որքան ուժեղ եմ: Պակյաոյի հետ մենամարտելուց ավելի հաճելի բան չկա: Հուսով եմ, որ չեմպիոններից որեւէ մեկը խիզախություն կունենա եւ կընդունի իմ մարտահրավերը»:

## Ձեռնոցները կօգնեն կանադացի մարզիկներին

2010-ին Վանկուվերում անցկացված ձմեռային օլիմպիական խաղերի ամենասիրված հուշանվերը կարմիր ձեռնոցներն էին, որոնց վրա պատկերված էին օլիմպիական օղակներն ու դափնետերեւը: Այժմ այդ ձեռնոցները դիզայնի որոշ փոփոխմամբ, զույգը 10 դոլարով վաճառքի են հանվելու: Օլիմպիական օղակների փոխարեն նոր ձեռնոցների վրա «Կանադա» մակագրությունն է: Ձեռնոցների վաճառքից ստացվելիք ողջ գումարը կօգտագործվի կանադացի մարզիկների ծախսերը հոգալու համար, որոնք արդեն սկսել են նախապատրաստվել Լոնդոնի ամառային օլիմպիադային:



## Կոնֆլիկտը հարթվեց

### *Ալեքսան Ավետիսյանն աշխատանքը կշարունակի ՀԱՕԿ-ի փոխնախագահի պաշտոնում*

Վերջին շրջանում բավական լարված մթնոլորտ էր ստեղծվել ձյուդոյի հանրապետական ֆեդերացիայում, որի անդամների մեծամասնությունն անվստահություն էր հայտնել կազմակերպության նախագահ Ալեքսան Ավետիսյանին՝ պահանջելով նրա հրաժարականը, մեղադրելով նրան ֆինանսական չարաշահումների մեջ:

Եվ ահա երեկ «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում կայացավ ձյուդոյի հանրապետական ֆեդերացիայի արտահերթ նիստը, որին ներկա էին մարզաձեւի միջազգային ֆեդերացիայի նախագահ Մարիուս Վիզերը, ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանն ու Ալեքսան Ավետիսյանը: Ընդունել ՀԱՕԿ-ի փոխնախագահի պաշտոնում: Իսկ Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիայի աշխատանքներն իր հսկողության տակ է առնելու Մարիուս Վիզերը, որը մինչեւ հոկտեմբերի վերջն իր ներկայացուցչին է ուղարկելու Հայաստան՝ բոլոր ծախսերը վերցնելով իր վրա: Մեր ֆեդերացիայի կողմից ընտրված անձնավորությունն էլ համատեղ կաշխատի միջազգային ֆեդերացիայի ներկայացուցչի հետ: Փաստորեն, ֆեդերացիան կգլխավորեն 2 հոգի: Իսկ մինչեւ ընտրությունը, ձյուդոյի Հայաստանի ֆեդերացիայի նախագահի պարտականությունները դրվեցին ՀԱՕԿ-ի գլխավոր քարտուղար Հրաչյա Ռոստոմյանի վրա: ՀԱՕԿ-ի նախագահը նաեւ նշեց, որ միջազգային ֆեդերացիան ձյուդոյի բարձրակարգ մարզիչ է գործուղելու Հայաստան, որի ծախսերն անձամբ հոգալու է Գագիկ Ծառուկյանը: Նա կգլխավորի Հայաստանի հավաքականը, կօգնի մեր մարզիչներին:



ՖՈՏՈԼՈՒՐ

Գագիկ Ծառուկյանը բացման խոսքում նշեց, որ Մարիուս Վիզերը հարգելով մեզ, մտահոգվելով ստեղծված իրավիճակով, թողել է գործերը եւ ժամանել է Երեւան, ինչի համար շատ շնորհակալ ենք: Նա ծանոթացել է իրադրությանը, զրուցել կողմերի հետ: ՀԱՕԿ-ի նախագահը նշեց, որ ինչպիսի որոշում էլ որ կայացնի Վիզերը, ինքը կհամաձայնվի՝ հարգելով նրան:

Ալեքսան Ավետիսյանը հակիրճ ներկայացրեց ձյուդոյի ֆեդերացիայի նախագահի պաշտոնում իր գործունեությունը, նշելով, որ եթե 1992-ին մարզաձեւով ընդամենը 340 հոգի էր զբաղվում, ապա այսօր պարապողների թիվը 3500 է: Միջազգային մի շարք մրցումներում հայ ձյուդոյիստները մրցանակակիրներ են դարձել: Նա ընդունեց, որ աշխատանքի ընթացքում եղել են բացթողումներ, որոնք էլ դժգոհության տեղիք են տվել: Ալեքսան Ավետիսյանը հայտարարեց, որ համաձայն կլինի ՀԱՕԿ-ի նախագահի եւ Մարիուս Վիզերի ցանկացած որոշմանը, պատրաստ է շարունակել աշխատել հանուն ձյուդոյի զարգացման՝ այս պահից վայր դնելով ձյուդոյի ֆեդերացիայի նախագահի իր լիազորությունները:

Այնուհետեւ Գագիկ Ծառուկյանը ներկաներին տեղեկացրեց, որ խորհրդակցելով Մարիուս Վիզերի հետ, եկել են համաձայնության հետեւյալ տարբերակի շուրջը: Նախ, հաշվի առնելով Ալեքսան Ավետիսյանի աշխատանքային զգալի փորձը մարզաշխարհում, նրան աշխատանքի

Մարիուս Վիզերը շնորհակալություն հայտնեց Գագիկ Ծառուկյանին, որն ըստ նրա ոչ միայն հզոր, այլեւ ազնիվ մարդ է, շատ մեծահոգի ու ներդրումներ է կատարում հայկական սպորտում: Նա նշեց, որ ծանոթացել է ֆեդերացիայի անդամների բողոքներին եւ ենթադրում է, որ դրանց մեծ մասը ճիշտ են, սակայն միայն դատավորը կարող է հստակ գնահատական տալ կատարվածին: Նա տեղեկացրեց, որ ստուգումներից պարզվել է, որ 2004-ից Ալեքսան Ավետիսյանը ֆրանսիական «Նորիս» ֆիրմայի հետ պայմանագիր ունի կնքած որպես Հայաստանում այդ կազմակերպության պաշտոնական ներկայացուցիչ եւ կազմակերպել է այդ ֆիրմայի արտադրանքի վաճառքը: Այս փաստն առիթ է, որպեսզի այսուհետ արգելվի որեւէ երկրի ձյուդոյի ֆեդերացիայի նախագահի դառնալու ֆիրմայի պաշտոնական ներկայացուցիչ:

Միջազգային ֆեդերացիայի նախագահը հույս հայտնեց, որ համատեղ ջանքերով կհաջողվի Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիայում ստեղծված այս իրավիճակը շտկել եւ նպաստել Լոնդոնի օլիմպիական խաղերին հայ ձյուդոյիստների պատշաճ նախապատրաստությանը:

## Մրցաշարում երկիշխանություն հաստատվեց

Շախմատի Կարեն Ասրյանի հուշամրցաշարի 3-րդ տուրից հետո երկիշխանություն հաստատվեց: 3 միավորով աղյուսակը գլխավորում են ռուսաստանցի Սերգեյ Վոլկովն ու վրացի Կոնստանտին Շանավան: Վոլկովը հաղթեց Մայա Լոմինեյշվիլուն, Շանավան առավելության հասավ Գեւորգ Ալավերդյանի նկատմամբ: Ռոբերտ Հովհաննիսյանը, Դավիթ Մագալաշվիլին, Գրիգոր Դիլանյանը, Սամվել Տեր-Սահակյանը, Վարդան Խոջայանը, Տիգրան Քոթանջյանն ու Հրայր Սիմոնյանը վաստակել են 2,5-ական միավոր:

Հովհաննիսյանը ոչ-ոքի խաղաց Տիգրան Պետրոսյանի հետ, որն ունի 2 միավոր: Տեր-Սահակյանը հաղթեց Տիգրան Սիմոնյանին, Դիլանյանն առավելության հասավ Լեւոն Բաբուջյանի նկատմամբ, Խոջայանն էլ պարտության մատնեց Նազի Պաիկիձեին: Քոթանջյանն իր 2-րդ հաղթանակը տոնեց Հովիկ Հայրապետյանի հետ մրցավեճում: Մրցաշարի ամենաստարեց մասնակից Էդուարդ Մնացականյանը ոչ-ոքի խաղաց Գեորգի Բագատուրովի հետ ու վաստակեց 2 միավոր:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

Օրվա հետքերով

# «Եթե իմ կյանքը վերապրելու հնարավորություն ունենայի, ապա նորից բժիշկ կդառնայի»



Քչերը գիտեն, որ բժիշկ **Ժիրայր Փխրիկյանի** շնորհիվ տարիներ առաջ հարյուրավոր մարդկանց կյանք է փրկվել: Բժիշկ Փխրիկյանը 1972 թվականին Հայաստանում առաջին անգամ մշակել է արյան երկարատեւ պահպանման բանկ (բաժին)՝ մինչեւ -196 աստիճան հասնող խոր սառեցման եղանակով: «Մեծ քանակությամբ արյունը երկար ժամանակ հնարավոր է պահպանել միայն խոր սառեցման մեթոդով», ասում է Ժիրայր Փխրիկյանը, ապա բացատրում. «Այս մեթոդը ձեւի համար չի ստեղծվել, սա պաշտպանական նշանակություն ունի»: Արտակարգ իրավիճակների, օրինակ՝ աղետների, պատերազմների ժամանակ մեծ քանակությամբ արյան պահանջ է լինում: Խոր սառեցման եղանակի շնորհիվ երկար տարիներ կարելի է պահել բոլոր խմբերի արյունները՝ նույնիսկ հազվադեպ հանդիպող խմբերի: «Այս եղանակով արյունն իր կենսական հատկությունները չի կորցնում», ավելացնում է բժիշկը: Նա պատմում է, որ խոր սառեցման եղանակով պահպանված արյուններն օգտագործվել են հատկապես 1988 թվականին՝ Սպիտակի երկրաշարժի ժամանակ, երբ բազմաթիվ վիրահատություններ էին կատարվում: Հենց այդ պահված արյունների շնորհիվ հարյուրավոր մարդիկ փրկվեցին: Ժիրայր Փխրիկյանը ցավով է նշում, որ տնտեսական ծանր պայմանների պատճառով իր ստեղծած մեթոդը 1990-ականներից այլեւս չի կիրառվում:

Ժիրայր Փխրիկյանը 86 տարեկան է: Արդեն 10 տարի դասավանդում է Լեւոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջում: Չնայած տարիքին՝ սիրով ու եռանդով է կատարում իր աշխատանքը: Ժիրայր Փխրիկյանը ծագումով վանեցի է, ծնողներն Արեւմտյան Հայաստանից գաղթել են Մեծ եղեռնի ժամանակ: 1951-ին Ժ. Փխրիկյանն ավարտել է Երեւանի բժշկական ինստիտուտը: Ավարտելուց հետո որպես բժիշկ աշխատել է Ռիգայում: Այնուհետեւ վերադարձել է Հայաստան եւ աշխատանքի անցել Երեւանի արյունաբանության եւ արյան փոխներարկման ինստիտուտում (1953-1993): «Ես հիմնականում զբաղվել եմ ոսկրածուծն օրգանիզմից դուրս պահպանելու խնդիրներով: Ինչպես արյունը, այնպես էլ ոսկրածուծն օրգանիզմից դուրս պետք է պահել այնպես, որ չկորցնի իր հատկությունները», ասում է բժիշկ Փխրիկյանը: Գիտական աշխատանքերի ու փորձերի արդյունքում Ժ. Փխրիկյանը ստեղծել է օրգանիզմից դուրս ոսկրածուծի պահպանման 3 հեղուկ միջավայր, որտեղ կարողացել է պահել ոսկրածուծը մինչեւ 7 օր: Կուբայում ոսկրածուծի պատվաստման առաջին վիրահատությունը 1967 թվին կատարել է բժիշկ Փխրիկյանը: «Ես մտադիր չէի որեւէ մեկին պատվաստել Կուբայում: Այնտեղ դասախոսություններ էի կարդում: Մի օր արգենտինացի բժիշկներից մեկը մոտեցավ ինձ ու խնդրեց խորհրդատվություն անցկացնել մի հիվանդի վերաբերյալ: Հիվանդը տառապում էր արյան պակասությամբ», պատմում է բժիշկը: Հիվանդին մանրամասն հետազոտելուց եւ դոնոր գտնելուց հետո Ժ. Փխրիկյանը ռիսկի է դիմել եւ վիրահատել է նրան: «Իմ աշխատանքային պրակտիկայում դա առաջին վիրահատությունն էր», ասում է բժիշկը: Մի քանի օր հետո վիրահատության արդյունքներն արդեն նկատելի են դարձել՝ հիվանդի վիճակը բարելավվել է: Բժշկի կատարած վիրահատությանն անդրադարձել են ինչպես Հայաստանի, այնպես էլ Կուբայի թերթերն ու ամսագրերը:

Ժիրայր Փխրիկյանը որպես դասախոս-խորհրդատու աշխատել է նաեւ Սուդանում, իսկ 1993-98 թթ.՝ Միքայելյանի անվան վիրաբուժական ինստիտուտում:

Այսօր Ժ. Փխրիկյանն իր տարիների փորձն ու գիտելիքները փոխանցում է երիտասարդներին: Ասում է, եթե հնարավորություն ունենար վերապրելու իր կյանքը, ապա կրկին բժիշկ կդառնար: Իր կատարած աշխատանքների մասին բժիշկը գերադասում է համեստորեն լռել՝ասելով. «Մարդու մեծությունը նրա հասարակ լինելու մեջ է»:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՄԱՀԱԶԴ

# Տիկին Զվարթ Ուզունյան



Երեկվա մեր համարում տեղեկացրել էինք դժբախտ պատահարի մասին, որին զոհ է գնացել կենսուրախ ու կենսասեր մի հայ կին՝ Զվարթ Ուզունյանը (Zvart Ouzounian, 1944 թ. ծնված) Կալիֆոռնիայից, որն իր ամուսնու՝ Հովսեփ Ուզունյանի հետ եկել էր Հայաստան՝ մասնակցելու ՀՀ սփյուռքի նախարարության կազմակերպած Սփյուռքահայ շրջանավարտների համաժողովին ու զբոսնելու: Բնականաբար, այր ու կին որոշել էին իրենց կեցության ընթացքում այցելել նաեւ Արցախ, որտեղ Հովսեփին այս անգամ անպայման ցանկանում էր տեսնել Տիգրանակերտի պեղումները... Ու ճանապարհին, հոկտեմբերի 3-ին, Վայքում, նրանց տեղափոխող տաքսի-ավտոմեքենան վթարվել էր, ինչի հետեւանքով տեղում մահացել էր տիկին Զվարթը, իսկ ամուսինը՝ լուրջ վնասվածքներով տեղափոխվել «Էրեբունի» հիվանդանոց, որտեղ բժիշկների ուշադիր խնամքի տակ ներկայիս բուժվում է եւ վիճակը գնահատվում է կայուն:

Տիկին Զվարթի մահով Ուզունյան ընտանիքը կորցնում է հրաշալի կին, մայր եւ հարազատ, հայրենասեր ու մարդասեր մի անձնավորություն: Նրա մահով իրենց բարերարին են կորցնում նաեւ Կալիֆոռնիայում ու Հայաստանում մի շարք ուսումնական ու բարեգործական հաստատություններ, որոնց այնքան աջակցում էր տիկին Զվարթն իր ամուսնու հետ:

Նա իր եսին սգակիր է թողնում՝

Ամուսնուն՝ Հովսեփ Ուզունյանին,

Որդուն՝ Հակոբ Ուզունյանին ու թոռանը՝ Հովսեփին,

Դուստրերին՝ Անի եւ Թամար Ուզունյաններին

Սայունսկի եւ զավակներին՝ Արիանային եւ Մայքին,

Իր մորը՝ Մարի Հակոբյանին,

Եվ համայն Ուզունյան, Ավագյան եւ Հակոբյան ընտանիքներին:

Հոգեհանգստյան կարգը տեղի է ունենալու **երկուշաբթի, հոկտեմբերի 11-ին, ժամը 12:30-ին, Կոնդի Սուրբ Հովհաննես եկեղեցում:**

Թաղումը՝ Մ. Նահանգներում, Կալիֆոռնիա, Բըրբենք:

# Իրանի խորհրդարանի նախագահ Ալի Լարիջանին Հայաստանում է

Հոկտեմբերի 8-ին երկօրյա աշխատանքային այցով Երեւան է ժամանել Իրանի խորհրդարանի նախագահ Ալի Լարիջանիի գլխավորած պատվիրակությունը: Երեկ Ազգային ժողովում Հովիկ Աբրահամյանն ընդունել է իրանցի գործընկերոջը: Կայացած առանձնազրույցի ընթացքում կարեւորվել են երկկողմ բարեկամական հարաբերությունները, միջխորհրդարանական հարաբերությունների զարգացումը: Զրույցի ընթացքում անդրադարձ է արվել նաեւ տարածաշրջանային հարցերին:

Առանձնազրույցից հետո հայ-իրանական հանդիպումը շարունակվել է ընդլայնված կազմով:

**Հ. Ա.**

Երեւանի Ապրանքա-Հումքային Բորսայի հարթակում իրականացվում է ԱրմենՏել ՓԲԸ-ի կողմից ներկայացված ՀՀ մարզերի՝ Արեւելյան ՏԿ, Արեւմտյան ՏԿ, Հյուսիսային ՏԿ, Կենտրոն ՏԿ եւ Հարավային ՏԿ-ների շահագործումից հանված գծամալուխային կառույցների բաժանորդային ցանցերի աճուրդային վաճառքը դասական եղանակով:

Աճուրդները կկայանան ս.թ. հոկտեմբերի 13-ին ժամը 11.00-ին եւ այնուհետեւ յուրաքանչյուր աշխ. օր ժ.11.00-17.00-ն, ք. Երեւան Ազաթանգեղոսի 6/1 (5-րդ հարկ) հասցեում: Աճուրդներին մասնակցելու կարգին, ամբողջական ցանկին ծանոթանալու եւ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (37410) 565228, նամակագրել **info@yercomex.am** կամ այցելել **www.borsa.am**

www.accea.info

ՆՈՐԱՐԱՐ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆԸ

Ներկայացնում է

սեպտեմբեր 2 - հոկտեմբեր 30, 2010

ԲԱԶՄԱՇԵՐՏ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑ

Ցուցահանդեսի համադրող ՍՈՆԻԱ ՊԱԼԱՍԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԸ

Ներկայացված երիտասարդ, խոստումնալից արվեստագետների աշխատանքներով

սեպտեմբեր 15 - հոկտեմբեր 15, 2010

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ՎՌԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ - ՇԱՔԵ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԵԿ ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ

**թատերական V փառատոն**, 8-15 նոյեմբեր, 2010

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Խաղը՝ մէկ քառակուսի մետր բեմի վրա:
2. Տևողությունը՝ մինչև 45 րոպե:
3. Ժանրի, ձևի, կերպարների սահմանափակումներ չկան:

Մասնակցության հայտերի վերջնաժամկետն է՝ 15.10. 2010

ՄՈՒՏՔՆ ԱԶԱՏ Է

Այցելություն ամեն օր բացի կիրակի եւ երկուշաբթի, ժամը 11:00-17:00

**Փավստոս Բյուզանդի 1/3 (Վերնիսաժի հարավ) հեռ. 568225**

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է **«Սյունաց Վոքը» ՍՊԸ-ի** կողմից ՀՀ Վայոց Ձորի մարզի Գողթանիկ համայնքի վարչական տարածքում՝ Եղեգիս գետի վրա «Եղեգիս-3» ՓՀԷԿ-ի կառուցման ջրառի ջրօգտագործման թույլտվության գործունեության ժամկետի երկարաձգման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. հոկտեմբերի 15-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է **«Ֆիրմա Գ. Ա. Խ.» ՍՊԸ-ի** կողմից ՀՀ Սյունիքի մարզի Շաղատ համայնքի վարչական տարածքում՝ Որոտան գետի Արագլիգետ վտակից «Գետափ» ՓՀԷԿ-ի շահագործման նպատակով 400.0 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության գործունեության ժամկետի երկարաձգման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. հոկտեմբերի 15-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Վայոց Ձորի մարզում գործող **«Վայք Գրուպ» ՓԲԸ** կողմից Արփա գետի վրա ՓՀԷԿ-ի կառուցման եւ նույնանուն գետից ջրառի ջրօգտագործման թույլտվության գործունեության ժամկետի երկարաձգման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. հոկտեմբերի 14-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

**«Մինա-Մայա» ՍՊԸ-ն** դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Գետափ համայնքում Եղեգիս գետի վրա «Եղեգնաձոր ՓՀԷԿ 1»-ի կառուցման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար:

Վայոց Ձորի մարզ, գյուղ Շատին ՀԷԿ, հեռ.՝ 010563448, hydrocorp–argichi@yahoo.com, ֆաքս՝ 010520775

www. azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 8.10.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: